

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019թ. ապրիլի 11-ի թիվ 8/12 որոշման համաձայն:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Հաշվեքննության առարկան

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեություն:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2019 թվականի ապրիլի 10-ից մինչև 2020 թվականի փետրվարի 28-ը ներառյալ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է համապատասխանության հաշվեքննություն:

Հաշվեքննության նպատակը

Հաշվեքննության նպատակն է՝ գնահատել Կինոկենտրոնի ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին:

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ, Կինոկենտրոնի ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանությունը իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ Կինոկենտրոն/ ֆինանսատնտեսական գործունեության՝ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Այդ մեթոդաբանություններով պահանջվում է, որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք առ այն, որ Կինոկենտրոնի ֆինանսատնտեսական գործունեությունը զերծ է էական անհամապատասխանություններից:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ մեր կարծիքի հիմնավորման համար:

Ոչ լիարժեք եզրահանգման հիմքեր

- ՀՀ մշակույթի նախարարության Կինոկենտրոնի կանոնադրությունը գրանցվել է պետական ռեգիստրում 18.09.2006թ.-ին: 14.07.2017թ.-ին, կանոնադրության փոփոխության արդյունքում, 5-րդ բաժինը (կազմակերպության կառավարում) խմբագրվել է նոր խմբագրությամբ, համաձայն որի՝ «կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը», որը կազմված է 7 անդամներից: Լիազոր պետական մարմնի կողմից խորհուրդ չի ստեղծվել: Փաստորեն՝ Կինոկենտրոնի կառավարումը չի համապատասխանում կանոնադրությամբ սահմանված կառավարման ձևին:
- 02.05.2017թ.-ին կնքվել է ֆիլմարտադրությանն աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ պայմանագիր, այսինքն՝ գեղարվեստական խորհրդի որոշումից (30.06.2017թ.) մոտ 2 ամիս առաջ: Սա նշանակում է, որ առանց գեղարվեստական խորհրդի որոշման կնքվել է ֆիլմարտադրության պայմանագիր, ինչից 59 օր հետո միայն տեղի է ունեցել գեղարվեստական խորհրդի որոշումը: Առկա է անհամապատասխանություն Կինոկենտրոնի «Գեղարվեստական խորհուրդ» անկախ էքսպերտների հանձնախմբի 01.02.2016թ.-ի կողմից հաստատված կանոնակարգի 15-րդ կետի պահանջի հետ, (Գեղարվեստական խորհուրդը ընթացիկ տարում հաստատում է Կինոկենտրոնի հաջորդ տարվա արտադրվելիք կինոնախագծերը):
- Համաձայն Կինոկենտրոնի և պրոդյուսերական ընկերությունների միջև կնքված պայմանագրերի համապատասխան կետերի՝ Կինոկենտրոնը պետք է հսկեր պրոդյուսերի կողմից ներդրված գումարների ծախսերը՝ ըստ ներկայացված նախահաշվի: Վերջինների կողմից չի կատարվել պայմանագրերի համապատասխան կետերի պահանջները:

- Պրոդյուսերական ընկերությունների կողմից չեն ապահովվել պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող ֆինանսավորման գրաֆիկները, որոնք որպես «հավելված 1» չեն ներկայացվել Կինոկենտրոն:
- Պայմանագրի կետով նախատեսվել է, որ «պրոդյուսերը անվերապահորեն ընդունում է և չի առարկում, որ Կինոկենտրոնի կողմից պարտավորությունների կատարումը հնարավոր է միմիայն պրոդյուսերի կողմից ներդրված գումարների վերաբերյալ ծախսային փաստաթղթերը Կինոկենտրոն ներկայացնելուց հետո»: Պրոդյուսերական ընկերությունները Կինոկենտրոն չեն ներկայացրել պայմանագրերով սահմանված իրենց կողմից կատարված ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունները, իսկ Կինոկենտրոնը չի կատարել ֆինանսավորման դադարեցումը:
- Ֆիլմի աշխատանքային պլանով նկարահանման վայրերը նշված են՝ Հայաստան, Ուկրաինա և Էստոնիա: Ֆիլմի հայտով նկարագրվում է, որ ներկայացվում է հայազգի նկարչի կյանքի պատմությունը: Ֆիլմում բացի նկարիչից, ներկայացված են ևս երեք տարբեր անձիք: Այսինքն՝ ֆիլմի իրական նկարահանումները ոչ միայն հայտում նշված անձի մասին չէր, այլ մի քանի ուրիշ անձնավորությունների, որոնց վերաբերյալ ֆիլմի ներկայացվելիք հայտում չկային, իսկ աշխատանքային պլանով Լիբանանը, Ֆրանսիան և ԱՄՆ-ն ներառված չէին:
- Նախահաշվով հաստատված 8 ծախսային հոդվածներից 7-ում տեղի են ունեցել շեղումներ՝ չփոփոխելով նախահաշվային ընդհանուր գումարը: Մասնավորապես՝ ճշտված նախահաշվում ստեղծագործական խմբի թվով 12 աշխատողների աշխատավարձի հոդվածում չի ներառվել հնչյունային օպերատորի աշխատավարձ: Սակայն աշխատավարձի ցուցակով հնչյունային օպերատորը 2017թ.-ի օգոստոս-նոյեմբեր ամիսներին ստացել է 714.0 հազ. դրամ աշխատավարձ:
- Չի կատարվել պայմանագրի պահանջը այն է՝ ներկայացնել այլ ֆիլմարտադրող կինոկազմակերպությունների հետ ստորագրած համաձայնագրերի պատճենները,

որոնցով հավաստիացվում է ֆիլմարտադրության կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը:

- Հայտի մեջ նշված, որպես գլխավոր դերակատարներ ընդգրկված դերասանների փոխարեն ֆիլմում նկարահանվել են այլ դերասաններ:
- Երկու ֆիլմի նկարահանման մասով չի կատարվել է պայմանագրերի պահանջը, այն է՝ «վերահսկել ֆիլմարտադրության կողմից գումարների նպատակային օգտագործումը՝ ըստ ներկայացված նախահաշվի: Ընդ որում, այս պարագայում ֆիլմարտադրության կողմից պետական միջոցներից հատկացված գումարները պետք է ծախսվեն օրենքով սահմանված կարգով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով»:
- Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող նախահաշիվը 2016 և 2017թթ. համար կնքվել է 30.03.2016թ.-ին երկկողմանի: 2017թ.-ին Կինոկենտրոնի կողմից միակողմանի հաստատվել է 20,000.0 հազ. դրամի նախահաշիվ՝ առանց օր և ամսաթվի նշելու: Նույն թվականին հաստատվել է միակողմանի ճշտված նախահաշիվ Կինոկենտրոնի տնօրենի կողմից՝ կրկին առանց օր և ամսաթվի:
- «ապրանքների հանձնման-ընդունման» ակտում նշված չէ ապրանքի (ֆիլմի) արտադրության համար կատարված փաստացի ծախսերի հանրագումարը, որի արդյունքում հնարավոր չէ հաշվարկել ՀՀ պետական բյուջեից կատարված ներդրման փաստացի փայաբաժինը, իսկ ֆիլմի ցուցադրումից՝ նաև ակնկալվող եկամուտները:
- Կինոկենտրոնը, չունենալով ֆիլմերի նախագծերն ուսումնասիրող հանձնախումբի կողմից պետական ֆինանսավորման տրամադրման որոշում, պրոդյուսերական ընկերության հետ կնքել է պայմանագիր:
- Ներդրումների տոկոսային հարաբերությամբ պետք է բաշխվեն նաև ֆիլմի ցուցադրումներից գոյացած եկամուտները, եթե կողմերի ստանձնած ներդրումային պարտավորությունները կատարվեն ամբողջությամբ: Մինչդեռ, պայմանագրով նախատեսված չէ Կինոկենտրոնի կողմից պրոդյուսերական ընկերության ներդրումների

արժանահավատության նկատմամբ վերահսկողական կամ հաշվետվողականության գործառույթներ:

- Պայմանագրով սահմանվել է ֆիլմի ընդհանուր բյուջեն՝ 61,625.5 հազ. ՌԴ ռուբլի, կամ 522,584.24 հազ. դրամ, որից Կինոկենտրոնի ներդրման չափը նախատեսվել է 97.800.0 հազ. դրամ: Պայմանագրով սահմանված չէ, թե մնացած գումարը ում կողմից է ներդրվելու, իսկ համաարտադրողի մասին պայմանագրում անդրադարձ չկա:
- Պայմանագրի ֆիլմի շահույթի բաշխման կարգով, նախատեսվել է՝ աշխարհում ֆիլմի տարածման իրականացման դեպքում ֆիլմի օգտագործման արդյունքից 5%-ի վճարվում Կինոկենտրոնին, իսկ ՀՀ տարածքում դիստրիբուցիա իրականացնելու դեպքում՝ վճարվում է 20%: 95%-մասնաբաժինը, որ կազմակերպությունն է ստանալու՝ պայմանագրում առկա չէ:
- Համադրել ենք պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ 2017-2018 թվականներին պրոդյուսերական ընկերությունների կողմից որպես մատակարար հարկային հաշիվ դուրս գրված և որպես գնորդ հարկային հաշիվ ստացած գումարների վերաբերյալ տեղեկատվությունը և ֆիլմերի նկարահանման համար կատարված ծախսերը /ներդրումները/: Պրոդյուսերական ընկերությունների սեփական և /կամ/ համաարտադրողների միջոցներից ծախսերի /ներդրումների/ իրականացումը դիսկային են (հավելված 3):
- Ֆիլմերի արտադրության համար Կինոկենտրոնի մասնակցությունից (մասնաբաժին) գոյացած գումարները պետք է կուտակվեն Կինոկենտրոնի արտաբյուջետային հաշվում և ուղղվեն ՊՈԱԿ-ի կանոնադրական գործառույթների իրականացմանը՝ համաձայն ՀՀ մշակույթի նախարարության կողմից հաստատված նախահաշվի:
- 2017 թվականին «Գնեմ վաճառեմ» ֆիլմի նկարահանման նպատակով ֆիլմի բեմադրող-ռեժիսորը, ով նաև հանդիսանում է Կինոկենտրոնի կինոխմբագիրը, 06.05.2017թ., 05.06.2017թ. և 06.07.2017թ. ֆիլմի գործուղման ծախսերը հոգալու համար զեկուցագրերով դիմել է Կինոկենտրոնի տնօրենին և նույն ամսաթվերին ստացել

համապատասխանաբար՝ 3,500,000, 4,500,000 և 1,000,000 դրամ առհաշիվ գումար, որոնք դրամարկղային ելքի օրդերներում ձևակերպվել են որպես ֆիլմի արտադրական ծախսեր: 23.11.2017 թվականին բեմադրող-ռեժիսորը Կինոկենտրոնի դրամարկղ է մուտքագրել 3,255.4 հազ. դրամ, իսկ 5,653.1 հազ.դրամը ձևակերպվել է որպես ք. Մոսկվա (նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 28-ը) գործուղման ծախսեր, 227.0 հազ. դրամը՝ ուղղակի ծախսեր: Առկա է անհամապատասխանություն «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, համաձայն որի «միևնույն անձին առհաշիվ կանխիկ դրամ չի կարող տրվել, եթե նրա կողմից նախկինում ստացված առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվությունը կազմակերպությունում այդ հաշվետվությունների ընդունման համար պատասխանատուին դեռևս չի ներկայացվել, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետվության ներկայացման ժամկետը չի լրացել»:

- գնանշման հարցման հրավերով հաստատված գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմվել են ապրանքների անվանումներին հղում կատարելով/«Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»/:

Ոչ լիարժեք եզրահանգում

ա/ Մեր կարծիքով, բացառությամբ «Ոչ լիարժեք եզրահանգման հիմք» պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության՝ «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը համապատասխանում է իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Դավիթ Չիբուխչյան՝
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
27 փետրվարի, 2020 թվական
ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստան

1. Ընդհանուր մաս

ՀՀ ԿԳՄՍ նախարարության Կինոկենտրոնի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019թ. ապրիլի 11-ի թիվ 8/12 որոշուման համաձայն:

Ըստ հաշվեքննության առաջադրանքի, նախատեսվել է իրականացնել համապատասխանության հաշվեքննություն՝ Կինոկենտրոնի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ: Որպես հաշվեքննության ընթացակարգեր սահմանվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական ընթացակարգի և վերահաշվարկի տեսակները: Հաշվեքննությունն ընդգրկել է 2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը ներառող ժամանակաշրջանը և կատարվել 2019թ. ապրիլի 19-ից մինչև 2020թ. փետրվարի 28-ը ներառող ժամկետում: Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության կողմից:

ՀՀ պետական բյուջեից 2017-2018թթ. ընթացքում Կինոկենտրոնին հատկացվել է 1,171,988.5 հազ. դրամի ֆինանսավորում: Ըստ տարիների և բյուջետային ծրագրերի հատկացված ֆինանսական միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև՝ /աղյուսակ 1/

Աղյուսակ 1

Ծրագրի անվանումը	2017թ.	2018թ.	Ընդամենը
Կինոնկարների արտադրություն, այդ թվում՝	353,615.3	325,440.0	679,055.3
Խաղարկային կինոնկարների արտադրություն	293,518.7	274,440.0	567,958.7
Մուլտիպլիկացիոն կինոնկարների արտադրություն	60,096.6	51,000.0	111,096.6
Կինոկենտրոնի պահպանման ծախսեր	148,999.9	139,314.9	288,314.8
Կինո-ֆոնո-ֆոնո հավաքածուի պահպանում	2871.5	2,684.9	5,556.4
Միջոցառումների իրական./դրամաշնորհ/	99,767.8	99,294.2	199,062.0
Ընդամենը	605,254.5	566,734.0	1,171,988.5

Համաձայն ՀՀ մշակույթի նախարարության կողմից սահմանված նախահաշվի՝ ՀՀ պետական բյուջեից 2017 թվականին Կինոկենտրոնի պահպանման համար նախատեսվել, ֆինանսավորվել և փաստացի ծախսը կազմել է 148,999.9 հազ. դրամ, որից՝ «աշխատավարձ և նրան հավասարեցված այլ վճարներ» հոդվածով նախատեսվել և փաստացի ծախսվել է 124,050.4 հազ. դրամ կամ 83.3%, իսկ «ծառայությունների և ապրանքների ձեռքբերում» հոդվածով նախատեսվել և փաստացի ծախսվել է 24,949.5 հազ. դրամ կամ 16.7%:

2018 թվականին նախատեսվել, ֆինանսավորվել և փաստացի ծախսը կազմել է 139,314.9 հազ. դրամ, որից՝ «աշխատավարձ և նրան հավասարեցված այլ վճարներ» հոդվածով նախատեսվել և փաստացի ծախսվել է 120,882.0 հազ. դրամ կամ 86.8%, իսկ «ծառայությունների և ապրանքների ձեռքբերում» հոդվածով նախատեսվել և փաստացի ծախսվել է 18,432.9.5 հազ. դրամ կամ 13.2%:

01.02.2016թ.-ին Կինոկենտրոնի տնօրենի կողմից հաստատվել է կանոնակարգ, համաձայն որի ստեղծվել է «Գեղարվեստական խորհուրդ» անկախ էքսպերտների հանձնախումբ, որով կանոնակարգվել է կինոնախագծերի ընդունման, հայտերի ընդունման կարգը: Կինոարտադրության համար հայտեր ընդունվել են ինչպես կինոպրոդյուսերներից, այնպես էլ՝ անհատ անձանցից ու ստեղծագործողներից, ովքեր կարող էին ներկայացնել կինոնախագծի՝ համապատասխան փաստաթղթերով համալրված, ամբողջական փաթեթ և բավարարել աջակցություն ստանալու համար պահանջվող պայմանները: Գեղարվեստական խորհուրդը խորհրդատվական մարմին է՝ կազմված հանրապետության մշակույթի գործիչներից, ովքեր Կինոկենտրոնի աշխատողներ չեն հանդիսանում: Խորհրդի անդամները ուսումնասիրում են ներկայացված նախագծերի գեղարվեստական արժանիքները և խորհրդի նիստի ընթացքում յուրքանջուր սցենարի և նկարահանող ռեժիսորի վերաբերյալ հայտնում բանավոր կարծիք: Տեղի է ունենում քննարկում և ձայների պարզ մեծամասնությամբ քվեարկություն, որի արդյունքում ձևավորվում է ֆինանսավորման ենթակա նախագծերի ցանկը: Գեղարվեստական խորհրդի

այն անդամը, ով շահագրգիռ կողմ է տվյալ նիստում քննարկվող կինոնախագծի առնչությամբ, քվեարկությանը չի մասնակցում:

Ընտրված նախագծերի ցանկը և նախագծերի ֆինանսավորման չափերը Կինոկենտրոնը ներկայացրել է ՀՀ մշակույթի նախարարություն՝ հաստատման, որի համար Կինոկենտրոնի և ՀՀ մշակույթի նախարարության, այնուհետև՝ Կինոկենտրոնի և հաստատված նախագծերի հեղինակների միջև կնքվել են համապատասխան պայմանագրեր: Ընթացիկ տարում հաստատվել են հաջորդ տարում արտադրվելիք կինոնախագծերը, որոնք, ըստ ՀՀ մշակույթի նախարարության կողմից տրված «Ընթացիկ տարվա արտադրության համար նախատեսված բյուջետային հատկացումների վերաբերյալ» տեղեկանքում ամրագրված կինոնախագծերի ցանկի խմբագրական բաժնի տրված զեկուցագրի, ֆինանսավորվել են և անցել արտադրության փուլ:

2. Անհամապատասխանության վերաբերյալ գրառումներ

Հաշվեքննության ենթարկելով 01.01.2017-31.12.2018թթ. ժամանակաշրջանում Կինոկենտրոնի կողմից ՀՀ օրենսդրության պահանջների, ինչպես նաև՝ իրեն վերապահված լիազորությունների և պարտականությունների շրջանակներում իրականացված ֆինանսատնտեսական գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին գործընթացը, պարզվեց.

**Կինոկենտրոնի կառավարումը
չի համապատասխանում
կանոնադրությամբ
սահմանված կառավարման
ձևին**

ՀՀ մշակույթի նախարարության
«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի
(այսուհետ՝ Կինոկենտրոն) կանոնադրությունը
գրանցվել է պետական ռեգիստրում 18.09.2006թ.-

ին: 14.07.2017թ.-ին կանոնադրության 5-րդ բաժինը (կազմակերպության կառավարում) խմբագրվել է նոր խմբագրությամբ, համաձայն որի՝ «կազմակերպության կառավարումն

իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, կոլեգիալ կառավարման մարմինը՝ **խորհուրդը**», որը կազմված է 7 անդամներից: Լիազոր պետական մարմնի կողմից խորհուրդ չի ստեղծվել, իսկ կանոնադրության այս կետը և դրանից բխող խորհրդի 11 կետից և բազմաթիվ ենթակետերից բաղկացած բոլոր իրավասությունները չեն կատարվել: Փաստորեն՝ Կինոկենտրոնի կառավարումը չի համապատասխանում կանոնադրությամբ սահմանված կառավարման ձևին:

2017 թվականին խաղարկային կինոնկարների արտադրության վերաբերյալ

ՀՀ մշակույթի նախարարության և Կինոկենտրոնի միջև 08.02.2017թ.-ին կնքվել է սուբսիդիայի տրամադրման պայմանագիր՝ 293,518.7 հազ. դրամ գումարով, համաձայն որի՝ Կինոկենտրոնը պարտավորվել է պայմանագրով սահմանված վճարի դիմաց աջակցել 21 խաղարկային ֆիլմերի, 1 փաստավավերագրական ֆիլմի և 2 սցենարական հայտի զարգացման արտադրությանը (**հավելված 1**):

«Անխելք մարդը» կամ «Լյուդվիգ անունով ոգնի» ֆիլմը - 2017թ. սուբսիդիայի պայմանագրով նախատեսվել է նկարահանել Մհեր Մկրտչյանի «Գոհար Գասպարյան» ֆիլմը: Կինոկենտրոնի գեղարվեստական խորհրդի 30 հունիսի 2017թ.-ի նիստով «Գոհար Գասպարյան» կինոնախագիծը փոխարինվել է «Անխելք մարդը» կինոնախագծով: Ֆիլմի ընդհանուր տևողությունը, համաձայն ֆիլմ արտադրությանը աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ 02.05.2017թ.-ին կնքված պայմանագրի, պետք է կազմեր 90 րոպե: Ֆիլմի ընդհանուր բյուջեն կազմում է 168,000.0 հազ. դրամ, որից՝ պրոդյուսերական ընկերության ներդրումը, համաձայն պայմանագրի 1.7 կետի, կազմում է 68,000.0 հազ. դրամ, իսկ Կինոկենտրոնի մասնաբաժինը, համաձայն պայմանագրի 1.6 կետի՝ 100,000.0 հազ. դրամ, որից՝ 83,657.0 հազ. դրամը՝ 2017թ.-ին, 16,343.0 հազ. դրամը՝ 2018թ.-ին:

Համաձայն պայմանագրի 3.1. կետի՝ «ֆիլմի եկամուտի բաշխման կարգ»-ով սահմանվել է ֆիլմի ընդհանուր շահագործման արդյունքում ստացած եկամուտի տոկոսը՝ Կինոկենտրոնի համար 59.5%, իսկ պրոդյուսերական ընկերության համար՝ 40.5%՝:

Կինոկենտրոնի և «Սինեպրո» ՍՊԸ-ի միջև, որը հանդիսանում է պրոդյուսերական ընկերություն՝ («Սինեպրո» ՍՊԸ-ն, համաձայն ՀՀ Կառավարության էլեկտրոնային ռեգիստր կայքի, ստեղծվել է **13.04.2017թ.**-ին, և տվյալ ընկերության հիմնադիրը հանդիսանում է ֆիլմի գլխավոր ռեժիսորը, **02.05.2017թ.-ին** կնքվել է ֆիլմատադրությանն աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ պայմանագիր, այսինքն՝ գեղարվեստական խորհրդի որոշումից (**30.06.2017թ.**) մոտ 2 ամիս առաջ: Առկա է անհամապատասխանություն Կինոկենտրոնի «Գեղարվեստական խորհուրդ» անկախ էքսպերտների հանձնախմբի 01.02.2016թ.-ի կողմից հաստատված կանոնակարգի 15-րդ կետի պահանջի հետ, (Գեղարվեստական խորհուրդը ընթացիկ տարում հաստատում է Կինոկենտրոնի հաջորդ տարվա արտադրվելիք կինոնախագծերը):

02.08.2017թ. Կինոկենտրոնի և «Սինեպրո» ՍՊԸ-ի հետ երկողմանի հաստատված նախահաշվով ներկայացվել է ֆիլմի ամբողջական ներդրումային ծախսերը՝ համապատասխանաբար 100,000.0 հազ. դրամ և 68,000.0 հազ. դրամ: Կինոկենտրոնի կողմից հաստատված 2017 և 2018 թվականների նախահաշիվը 2017թ.-ին՝ 83,657.0 հազ. դրամ, և 2018թ.-ին՝ 16,343.0 հազ. դրամ, կնքված և ստորագրված էր, իսկ 2018թ.-ի նախահաշվում ամսաթիվը նշված չէր:

Կինոկենտրոնը «Ապաթեոզ» ՍՊԸ-ի հետ կնքել է գույքի վարձակալման պայմանագիր՝ 21,000.0 հազ. դրամ գումարի չափով, իսկ 62,657.0 հազ. դրամը փոխանցել է «Սինեպրո» ՍՊԸ-ին: Վերջինս էլ՝ այդ գումարից 9,000.0 հազ. դրամ իր հերթին փոխանցել է նույն «Ապաթեոզ» ՍՊԸ-ին:

10.01.2018թ.-ին կողմերի միջև կնքված Լրացուցիչ համաձայնագրի 5.5 կետով սահմանվել է, որ «պայմանագրի 2.1.6 կետի դրույթներով, պայմանագրի 1.9 կետում նշված ժամկետի ավարտից հետո, կողմերը իրավունք ունեն պահանջել միմյանցից պայմանագրի

Ակտում նշված չէ ապրանքի (ֆիլմի) արտադրության համար կատարված փաստացի ծախսերի հանրագումարը, որի արդյունքում հնարավոր չէ հաշվարկել ՀՀ պետական բյուջեից կատարված ներդրման փաստացի փայաբաժինը, իսկ ֆիլմի ցուցադրումից՝ ակնկալվող եկամուտները

1.6 և 1.7 կետերով նախատեսված գումարային ներդրումների չափին համամասնորեն ապացույցներ (հաշվապահական ձևակերպումների, բանկային փոխանցումների տեսքով): Նշված ապացույցները ուսումնասիրելուց հետո, գնահատելով յուրաքանչյուր Կողմի կողմից կատարված փաստացի ներդրումը ֆիլմի արտադրության մեջ, 3.1 կետում նշված տոկոսային

հարաբերությունը փոխվում է համապատասխանաբար»:

26.09.2018թ. Կինոկենտրոնի և «Սինեպրո» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ապրանքների հանձնման-ընդունման ակտ», համաձայն որի պրոդյուսերի կողմից հանձնվել, իսկ Կինոկենտրոնի կողմից ընդունվել է «Անխելք մարդ» ֆիլմը՝ 90 րոպե տևողությամբ: Ակտում նշված չէ ապրանքի (ֆիլմի) արտադրության համար կատարված փաստացի ծախսերի հանրագումարը, որի արդյունքում հնարավոր չէ հաշվարկել ՀՀ պետական բյուջեից կատարված ներդրման փաստացի փայաբաժինը, իսկ ֆիլմի ցուցադրումից՝ ակնկալվող եկամուտները: Ֆիլմից ընդհանուր հասույթը կազմել է 35.2 հազ. դրամ:

«Վերադարձողները» - Փստրավալերագրական ֆիլմի նկարահանման աշխատանքների մասնակցության հայտադիմումը «Ոսկե Ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ ԿՀՀ) կողմից Կինոկենտրոն է ներկայացվել 2015 թվականին:

01.04.2016թ. կնքված Համատեղ ֆիլմ արտադրության պայմանագրի 1.5. կետով ֆիլմի ընդհանուր բյուջեն սահմանվել է 78,600.0 հազ. դրամ: Պայմանագրի 1.6 կետով Կինոկենտրոնից ակնկալվող գումարի չափը կազմել է 55,000.0 հազ. դրամ, իսկ

պայմանագրի 1.7 կետով արտադրողի ներդրման չափը նախատեսվել է 23,600,0 հազ. դրամ:

Ֆիլմի աշխատանքները «Ոսկե Ծիրան» ԿԶՀ-ն սկսել է 2016 թվականից, 2016 թ.-ին ԿԶՀ-ին փոխանցվել է 15,000.0 հազ. դրամ, 2017թ.-ին՝ 40,000,0 հազ. դրամ: Ֆիլմի ընդհանուր տևողությունը պետք է կազմեր 100 րոպե:

Համաձայն պայմանագրի 3.1. կետի՝ ֆիլմի եկամուտի բաշխման կարգով սահմանվել է ֆիլմի ընդհանուր շահագործման արդյունքում ստացած եկամուտի տոկոսը՝ 70% Կինոկենտրոնի համար և 30% պրոդյուսերական ընկերության համար:

Ֆիլմի աշխատանքային պլանով նկարահանման վայրերը նշված են՝ Հայաստան, Ուկրաինա և Էստոնիա: Ֆիլմի հայտով նկարագրվում է, որ ներկայացվում է հայազգի նկարչի կյանքի պատմությունը: Սակայն ֆիլմում բացի նկարիչից, ներկայացված են ևս երեք տարբեր անձիք: Այսինքն՝ ֆիլմի իրական նկարահանումները ոչ միայն հայտում նշված անձի մասին չէր, այլ մի քանի ուրիշ անձնավորությունների, որոնց վերաբերյալ ֆիլմի ներկայացվելիք հայտում չկային, իսկ աշխատանքային պլանով Լիբանանը, Ֆրանսիան և ԱՄՆ-ն ներառված չէին:

Համաձայն պայմանագրի 2.1.6. կետի՝ Կինոկենտրոնը պետք է հսկեր թե **Մասնավորապես՝ ստեղծագործական խմբի թվով 12 աշխատողների աշխատավարձի հոգվածում չի ներառվել հնչյունային օպերատորի աշխատավարձ, որը ճշտված նախահաշվում նախատեսված չէր: Սակայն հնչյունային օպերատորը 2017թ.-ի օգոստոս-նոյեմբեր ամիսներին ստացել է 714.0 հազ. դրամ աշխատավարձ:**

Կինոկենտրոնի, և թե՛ պրոդյուսերի կողմից ներդրված գումարների ծախսումը ներկայացված նախահաշվին համապատասխան, սակայն նախահաշվով հաստատված 8 ծախսային հոգվածներից 7-ում տեղի են ունեցել շեղումներ՝ չփոփոխելով նախահաշվային ընդհանուր գումարը: Մասնավորապես՝ ճշտված նախահաշվում ստեղծագործական խմբի թվով 12 աշխատողների աշխատավարձի հոգվածում չի ներառվել հնչյունային օպերատորի աշխատավարձ: Սակայն

աշխատավարձի ցուցակում հնչյունային օպերատորը 2017թ.-ի օգոստոս-նոյեմբեր ամիսներին ստացել է 714.0 հազ. դրամ աշխատավարձ: «Վերադարձողները» ֆիլմի ռեժիսորը 25.12.2017թ.-ի գրությամբ ներկայացրել է բացատրություն՝ ֆիլմի նախահաշվով նախատեսված ծախսերի և փաստացի կատարված ծախսերի շեղումների վերաբերյալ, ըստ որի՝ նկարահանված նյութի վրա մոնտաժային և հնչյունային աշխատանքներն ավելի շատ են եղել, քան նախատեսված էր և մեծ գումարով աշխատանքը տրվել է մասնագիտացված կազմակերպությանը: Աշխատավարձի հոդվածով եղել է տնտեսում, որն էլ օգտագործվել է մոնտաժային և հնչյունային ծախսերի վրա:

«Սպիտակ» - Լիամետրաժ կինոնախագծի նկարահանման աշխատանքների մասնակցության հայտադիմումը պրոդյուսորի («Ազգային կինոյի զարգացման» հիմնադրամ) կողմից Կինոկենտրոն է ներկայացվել 2016 թվականին, որում նախագծի ընդհանուր բյուջեն նախատեսվել է 936,920,0 հազ. դրամ: Արտադրողի և համարտադրողի («Տելեստո ֆիլմ» պրոդյուսերական ընկերություն, ՌԴ) ներդրման չափը նախատեսվել է 886,920.0 հազ. դրամ, իսկ Կինոկենտրոնից ակնկալվող գումարի չափը կազմել է 50,000.0 հազ. դրամ:

21.11.2016 թվականին Կինոկենտրոնի և «Ազգային կինոյի զարգացման» հիմնադրամի միջև կնքվել է ֆիլմի արտադրության պայմանագիր, համաձայն որի պրոդյուսերը պարտավորվում է սահմանված վճարի դիմաց պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել **«Սպիտակ»** պայմանական վերնագրով խաղարկային ֆիլմի արտադրությունը և այլ ծառայությունները: Ֆիլմի ընդհանուր բյուջեն կազմել է 936,920,0 հազ. դրամ, որից Արտադրողի՝ «Ազգային կինոյի զարգացման» հիմնադրամի և համարտադրողի («Տելեստո ֆիլմ» պրոդյուսերական ընկերություն) ներդրման չափը կազմել է 886,920.0 հազ. դրամ, իսկ Կինոկենտրոնի մասնակցությունը՝ 2017թ.-ին՝ 25,000,0 հազ. դրամ, և 2018թ.-ին՝ 25,000,0 հազ. դրամ: Ֆիլմի ընդհանուր տևողությունը, համաձայն պայմանագրի, պետք է կազմեր 90 րոպե:

Համաձայն պայմանագրի 3.1. կետի՝ ֆիլմի եկամուտի բաշխման կարգով սահմանվել է ֆիլմի ընդհանուր շահագործման արդյունքում ստացած եկամուտի տոկոսը՝ 5% Կինոկենտրոնի համար, 79.8% համարտադրողի համար, իսկ 15.2% պրոդյուսերական ընկերության համար («Ազգային կինոյի զարգացման» հիմնադրամ):

«Ազգային կինոյի զարգացման» հիմնադրամ պրոդյուսերական ընկերությունը 14.02.2017թ.-ին կնքել է գույքի վարձակալման պայմանագիր՝ «Ապաթեոզ» ՍՊԸ-ի հետ 5,600.0 հազ. դրամ գումարով:

Հիմնադրամի տնօրենը «Ապաթեոզ» ՍՊԸ-ի հիմնադիրներից է: Վարձակալի

Հիմնադրամի տնօրենը

«Ապաթեոզ» ՍՊԸ-ի

հիմնադիրներից է:

Վարձակալի տնօրենը

հանդիսանում է վարձատու

կազմակերպության հիմնադիր

և միևնույն ժամանակ

փոխկապակցված անձ ՊՈԱԿ-ի

տնօրենի հետ:

տնօրենը հանդիսանում է վարձատու կազմակերպության հիմնադիր և միևնույն ժամանակ փոխկապակցված անձ ՊՈԱԿ-ի տնօրենի հետ:

«Սպիտակ» ֆիլմի արտադրության համար,

համաձայն Եվրոպայի խորհրդի «Եվրոմաժ»

հիմնադրամի 07.03.2017թ. արձանագրության,

օգնություն է հատկացվել՝ 250.000 եվրոյի չափով: Կինոկենտրոնը անդամակցում է այս կազմակերպությանը և ՀՀ մշակույթի նախարարության «միջոցառումների իրականացման /դրամաշնորհ/» ծրագրով յուրաքանչյուր տարի վճարվում է անդամավճար՝ 117-120 հազ. եվրոյի չափով:

Գումարը բաշխվել է համապատասխանաբար՝ «Տելեստո ֆիլմ» պրոդյուսերական ընկերությանը՝ 197.500 եվրո (79%), իսկ «Ազգային կինոյի զարգացման» հիմնադրամին՝ 52.500 եվրո (21%):

«Ազգային կինոյի զարգացման» հիմնադրամին գումարը փոխանցվել է 05.12.2017թ.-ին՝ 31.500 եվրո կամ 18,033.8 հազ. դրամ, 09.07.2018թ.-ին՝ 10,500 եվրո կամ 5,965.4

հազ. դրամ, և 09.04.2019թ.-ին՝ 10.500 եվրո կամ 5,759.6 հազ. դրամ, ընդամենը՝ 29,758.8 հազ. դրամ:

Ֆիլմի ցուցադրումից որևէ գումար չի մուտքագրվել Կինոկենտրոնի արտաբյուջետային հաշիվ:

«Ոչ թեթև ուշագնացություն» - Կինոնախագծի նկարահանման աշխատանքների մասնակցության հայտը բեմադրող-ռեժիսորի կողմից Կինոկենտրոն է ներկայացվել 2016 թվականին, որում նախագծի ընդանուր բյուջեն նախատեսվել է 150,000.0 հազ. դրամ: Արտադրողի («Թիմ պրոդաքշն» ՓԲԸ) ակնկալվող ներդրման չափը նախատեսվել է 33,000.0 հազ. դրամ, համարտադրողի ներդրման չափը նախատեսվել է 92,000.0 հազ. դրամ, Կինոկենտրոնից ակնկալվող գումարի չափը կազմել է 25,000.0 հազ. դրամ:

01.08.2016թ.-ին Կինոկենտրոնի և «Թիմ պրոդաքշն» ՓԲԸ-ի միջև կնքված Համատեղ ֆիլմ արտադրության պայմանագրի 1.5 կետով ֆիլմի ընդհանուր բյուջեն սահմանվել է 214,000.0 հազ. դրամ, որից՝ Կինոկենտրոնի կողմից ակնկալվող ներդրման չափը պայմանագրի 1.6 կետով սահմանվել է 21,000.0 հազ. դրամ, որից՝ 2016թ.-ին՝ 6,000,0 հազ. դրամ, 2017թ.-ին՝ 15,000,0 հազ. դրամ, իսկ «Թիմ պրոդաքշն» ՓԲԸ-ի ներդրումը, համաձայն պայմանագրի 1.7 կետի, կազմել է 193,000.0 հազ. դրամ:

Ֆիլմի ընդհանուր տևողությունը պետք է կազմեր 90 րոպե:

Համաձայն պայմանագրի 3.1. կետի՝ ֆիլմի եկամուտի բաշխման կարգով սահմանվել է ֆիլմի ընդհանուր շահագործման արդյունքում ստացած եկամուտի տոկոսը՝ 9.8%՝ Կինոկենտրոնի համար, 90.2%՝ պրոդյուսերական ընկերության համար:

Ֆիլմի հայտի մեջ ներառված, որպես գլխավոր դերակատար ընդգրկված դերասանի փոխարեն նկարահանվել է այլ դերասան:

Ֆիլմի ցուցադրումից որևէ գումար չի մուտքագրվել Կինոկենտրոնի արտաբյուջետային հաշիվ:

«Տափկիս վարսերը» - Լիամետրաժ կինոնախագծի նկարահանման աշխատանքների մասնակցության հայտադիմումը պրոդյուսորական ընկերություն «Պարալլելս ֆիլմ Պրոդակշն» ՍՊԸ-ի կողմից Կինոկենտրոն է ներկայացվել 2016 թվականին, որում նախագծի ընդհանուր բյուջեն նախատեսվել է 312,000.0 հազ. դրամ: Արտադրողի ներդրման չափը նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ, իսկ համարտադրողի (Ժելֆիլմ, Բուլղարիա) ներդրման չափը՝ 99,000.0 հազ. դրամ, միջազգային ֆոնդերի ներդրման չափը՝ 75,000.0 հազ. դրամ, իսկ Կինոկենտրոնից ակնկալվող գումարի չափը կազմել է 88,000.0 հազ. դրամ:

29.03.2016 թվականին Կինոկենտրոնի և «Պարալլելս ֆիլմ Պրոդակշն» ՍՊԸ-ի միջև կնքվել է Համատեղ ֆիլմ արտադրության պայմանագիր, համաձայն որի պրոդյուսերը պարտավորվում է սահմանված վճարի դիմաց պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել **«Տափկիս վարսերը»** պայմանական վերնագրով խաղարկային կինոնկարի արտադրությունը, Կինոկենտրոնին հանձնվում են նախահաշվի ծախսային հոդվածների համապատասխան սկզբնական հաշվառման փաստաթղթերի կրկնօրինակների տեսքով, որոնց ընդունման դեպքում ստորագրվում է հանձնման-ընդունման ակտը:

Պայմանագրի 1.5 կետով սահմանվել է ֆիլմի ընդհանուր բյուջեն՝ 312,000.0 հազ. դրամ, որից Կինոկենտրոնի ներդրման չափը պայմանագրի 1.6 կետով սահմանվել է՝ 2016թ.-ին՝ 8,000.0 հազ. դրամ, 2017թ.-ին՝ 15,000.0 հազ. դրամ: Իսկ «Պարալլելս ֆիլմ Պրոդակշն» ՍՊԸ-ի ներդրման չափը պայմանագրի 1.7 կետով սահմանվել է 298,000.0 հազ. դրամ: Ֆիլմի տևողությունը պետք է կազմեր 100 րոպե:

Հարկ է նշել, որ հայտով ներկայացված համարտադրողի վերաբերյալ տեղեկատվություն պայմանագրում առկա չէ:

Ֆիլմի աշխատանքները սկսվել են 2016թ.-ից: Կինոկենտրոնի մասնակցությունը 2017թ.-ին կազմել է 15,000.0 հազ. դրամ, որից՝ 5,557.0 հազ. դրամը Կինոկենտրոնը փոխանցել է «Պարալլելս ֆիլմ Պրոդակշն» ՍՊԸ-ին, իսկ 9,443.0 հազ. դրամը

Կինոկենտրոնը փոխանցել է ՍՊԸ-ի կողմից ներկայացված ֆիլմարտադրության ծախսերը հոգալու համար:

Համաձայն պայմանագրի 3.1. կետի՝ ֆիլմի եկամուտի բաշխման կարգով սահմանվել է ֆիլմի ընդհանուր շահագործման արդյունքում ստացած եկամուտի տոկոսը՝ 7.4%՝ Կինոկենտրոնի համար, 92.6%՝ պրոդյուսերական ընկերության համար:

Չի կատարվել պայմանագրի 2.3.11 կետը, այն է՝ ներկայացնել այլ ֆիլմարտադրող կինոկազմակերպությունների հետ ստորագրած համաձայնագրերի պատճենները, որոնցով հավաստիացվում է ֆիլմարտադրության կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը:

Չի կատարվել պայմանագրի 2.3.14 կետը,՝ Կինոկենտրոնի պահանջով նրան ներկայացնել պայմանագրի կատարմանը վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Կինոկենտրոնը չի օգտվել այդ իրավունքից՝ ներդրումների և իրական մասնաբաժնի չափերը հստակեցնելու համար:

«Գնեմ վաճառեմ» - Կինոնախագծի նկարահանման աշխատանքների մասնակցության հայտը բեմադրող-ռեժիսորի կողմից Կինոկենտրոն է ներկայացվել 2016 թվականին, որում նախագծի ընդհանուր բյուջեն նախատեսվել է 5,000.0 հազ. դրամ: Համարտադրողի («Իմիջ պրոդաքշն») ներդրման չափը նախատեսվել է 2,000.0 հազ. դրամ, Կինոկենտրոնից (արտադրող իրավատեր) ակնկալվող գումարի չափը կազմել է 3,000.0 հազ. դրամ:

02.05.2017 թվականին Կինոկենտրոնի և «Էլեգիա» ՍՊԸ-ի (ՌԴ) միջև կնքվել է ֆիլմ արտադրության աջակցության պայմանագիր: Պայմանագրի 1.3 կետով ֆիլմի ընդհանուր բյուջեն սահմանվել է 23,365.0 հազ. դրամ, որից Կինոկենտրոնի կողմից ակնկալվող ներդրման չափը, համաձայն պայմանագրի 1.4 կետի, սահմանվել է 9,000.0 հազ. դրամ, (որից գործուղման ծախսեր՝ 5664.8 հազ. դրամ, նկարահանման տեխնիկայի

Չի կատարվել պայմանագրի 2.3.14 կետը, այն է՝

Կինոկենտրոնի պահանջով նրան ներկայացնել պայմանագրի կատարմանը վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Կինոկենտրոնը չի օգտվել այդ իրավունքից՝ ներդրումների և իրական մասնաբաժնի չափերը հստակեցնելու համար:

վարձակալության ծախսեր՝ 3,312.5 հազ. դրամ, և այլ ուղղակի ծախսեր՝ 22.7 հազ. դրամ), իսկ «Էլեգիա» ՍՊԸ-ի (ՌԴ) ներդրումը, համաձայն պայմանագրի 1.5 կետի, կազմել է 14,365.0 հազ. դրամ: Ֆիլմի տևողությունը պետք է կազմեր 20 րոպե:

Համաձայն պայմանագրի 3.1 կետի՝ ֆիլմի եկամուտի բաշխման կարգով սահմանվել է ֆիլմի ընդհանուր շահագործման արդյունքում ստացած

եկամուտի տոկոսը՝ 38%՝ Կինոկենտրոնի համար, իսկ 62%՝ պրոդյուսերական ընկերության համար:

Ներկայացված հայտի մեջ, որպես ֆիլմի գլխավոր դերակատարներ ընդգրկված դերասանների փոխարեն ֆիլմում նկարահանվել են այլ դերասաններ: Ֆիլմի նկարահանման աշխատանքները կատարվել են ՌԴ Մոսկվա քաղաքում:

Ֆիլմի ցուցադրումից որևէ գումար չի մուտքագրվել Կինոկենտրոնի արտաբյուջետային հաշիվ:

«Նրա մասին» - Լիամետրաժ կինոնախագծի նկարահանման աշխատանքների մասնակցության հայտադիմումը պրոդյուսորական ընկերություն՝ «Այսօր Պլյուս» ֆիլմարտադրություն Ա/Կ-ի կողմից Կինոկենտրոն է ներկայացվել 2015 թվականին, որում

նախագծի ընդհանուր բյուջեն նախատեսվել է 220,000.0 հազ. դրամ: Արտադրողի ներդրման չափը նախատեսվել է 152,000.0 հազ. դրամ, իսկ համաարտադրողի (LIGHTSOURCE FILM PRODUCTIONS, Նորվեգիա) ներդրման չափը՝ 20,000.0 հազ. դրամ: Կինոկենտրոնից ակնկալվող գումարի չափը կազմել է 48,000.0 հազ. դրամ:

30.03.2016 թվականին Կինոկենտրոնի և «Այսօր Պլյուս» ֆիլմարտադրություն Ա/Կ-ի միջև կնքվել է ֆիլմի արտադրության պայմանագիր, համաձայն որի պրոդյուսերը պարտավորվում է սահմանված վճարի դիմաց պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել «**Նրա մասին**» պայմանական վերնագրով խաղարկային կինոնկարի արտադրությունը և այլ ծառայությունները, որի արդյունքը, համաձայն պայմանագրի 1.2 կետի, Կինոկենտրոնին հանձնվում են՝ նախահաշվի ծախսային հոդվածների համապատասխան սկզբնական հաշվառման փաստաթղթերի կրկնօրինակների տեսքով, որոնց ընդունման դեպքում ստորագրվում է հանձնման-ընդունման ակտը:

Պայմանագրի 1.5 կետով սահմանվել է ֆիլմի ընդհանուր բյուջեն՝ 220,000.0 հազ. դրամ, որից Կինոկենտրոնի ներդրման չափը՝ պայմանագրի 1.6 կետով սահմանվել է՝ 2016թ.-ին՝ 10,000.0 հազ. դրամ, 2017թ.-ին՝ 20,000.0 հազ. դրամ: Իսկ «Այսօր Պլյուս» ֆիլմարտադրություն Ա/Կ-ի ներդրման չափը պայմանագրի 1.7 կետով սահմանվել է 190,000.0 հազ. դրամ: Ֆիլմի տևողությունը պետք է կազմեր 85 րոպե:

Հարկ է նշել, որ հայտով ներկայացված համարտադրողի վերաբերյալ տեղեկատվություն, պայմանագրում առկա չէ:

Համաձայն պայմանագրի 3.1 կետի՝ ֆիլմի եկամուտի բաշխման կարգով սահմանվել է ֆիլմի ընդհանուր շահագործման արդյունքում ստացած եկամուտի տոկոսը՝ 13.6%՝ Կինոկենտրոնի համար, 86.4%՝ պրոդյուսերական ընկերության համար:

**Չի կատարվել է պայմանագրի
2.1.4. կետի պահանջը, այն է՝
«վերահսկել
ֆիլմարտադրության կողմից
սույն պայմանագրի 1.6 կետում
նշված գումարների
նպատակային օգտագործումը՝
ըստ ներկայացված
նախահաշվի:**

Չի կատարվել է պայմանագրի 2.1.4. կետի պահանջը, այն է՝ «վերահսկել ֆիլմարտադրության կողմից սույն պայմանագրի 1.6 կետում նշված գումարների նպատակային օգտագործումը՝ ըստ ներկայացված նախահաշվի: Ընդ որում, այս պարագայում ֆիլմարտադրության կողմից պետական միջոցներից հատկացված գումարները

պետք է ծախսվեն օրենքով սահմանված կարգով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Կինոկենտրոնը «Այսօր Պլյուս» ֆիլմարտադրություն Ա/Կ-ից չի պահանջել նախահաշվով կատարված ծախսերի կատարման համապատասխանությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին համապատասխան:

Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող նախահաշիվը 2016 և 2017թթ. համար կնքվել է 30.03.2016թ.-ին երկողմանի: 2017թ.-ին Կինոկենտրոնի կողմից միակողմանի հաստատվել է 20,000.0 հազ. դրամի նախահաշիվ՝ առանց օր և ամսաթվի նշելու: Նույն թվականին հաստատվել է միակողմանի ճշտված նախահաշիվ Կինոկենտրոնի տնօրենի կողմից՝ կրկին առանց օր և ամսաթվի:

Համաձայն պայմանագրի 5.1 կետի՝ Պայմանագրի կողմերը վարում են սեփական ֆինանսական ծախսերի առանձին հաշվառում և կողմերից յուրաքանչյուրի պահանջի դեպքում՝ միմյանց են փոխանցում տեղեկատվություն, կատարված աշխատանքների և դրանց նպատակով կատարված վճարումների մասին: Կինոկենտրոնը չի օգտվել այդ իրավունքից՝ ներդրումների և իրական մասնաբաժնի չափերը հստակեցնելու համար:

Ֆիլմի ցուցադրումից որևէ գումար չի մուտքագրվել Կինոկենտրոնի արտաբյուջետային հաշիվ:

«Ճանապարհ» - Ֆիլմի աշխատանքային անվանումն է՝ Ճանապարհ նովելաշար («Մեքենա», «Սարը», «Ավելորդը» կարճամետրաժ ֆիլմերով):

Նկարահանման աշխատանքների մասնակցության հայտադիմումը «Էդգար Բաղդասարյան ֆիլմպրոդակշն» ՍՊԸ-ի կողմից Կինոկենտրոն է ներկայացվել 2015 թվականին, որում նախագծի ընդհանուր բյուջեն նախատեսվել է 115,000.0 հազ. դրամ: Արտադրողի ներդրման չափը նախատեսվել է 60,000.0 հազ. դրամ: Կինոկենտրոնից ակնկալվող գումարի չափը կազմել է 55,000.0 հազ. դրամ:

01.04.2016 թվականին Կինոկենտրոնի և «Էդգար Բաղդասարյան ֆիլմպրոդակշն» ՍՊԸ-ի միջև կնքվել է ֆիլմի արտադրության պայմանագիր, համաձայն որի պրոդյուսերը պարտավորվում է սահմանված վճարի դիմաց պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել «**Ճանապարհ**» ֆիլմաշարի արտադրությունը և այլ ծառայությունները, որի արդյունքը, համաձայն պայմանագրի 2.3.6 կետի, Կինոկենտրոնին հանձնվում են՝ նախահաշվի ծախսային հոդվածների համապատասխան սկզբնական հաշվառման փաստաթղթերի կրկնօրինակների տեսքով, որոնց ընդունման դեպքում ստորագրվում է հանձնման-ընդունման ակտը:

Պայմանագրի 1.5 կետով սահմանվել է ֆիլմի ընդհանուր բյուջեն՝ 115,000.0 հազ. դրամ, որից պրոդյուսերի ներդրման չափը կազմում է 60,000.0 հազ. դրամ, իսկ Կինոկենտրոնի ներդրման չափը՝ 55,000.0 հազ. դրամ, որից 2016թ.-ին՝ 15,000.0 հազ. դրամ, 2017թ.-ին՝ 20,000.0 հազ. դրամ, և 2018թ.-ին՝ 20,000.0 հազ. դրամ:

Ֆիլմի տևողությունը, համաձայն ֆիլմ արտադրության վերաբերյալ 01.04.2016թ.-ին կնքած պայմանագրի, պետք է կազմեր 120 րոպե: Համաձայն պայմանագրի 3.1 կետի՝ ֆիլմի եկամուտի բաշխման կարգով սահմանվել է ֆիլմի ընդհանուր շահագործման արդյունքում ստացած եկամուտի տոկոսը՝ 45%՝ Կինոկենտրոնի համար, 55%՝ պրոդյուսերական ընկերության համար:

Չի կատարվել պայմանագրի 1.10 կետի պահանջը, այն է՝ պայմանագրի 1.6 կետում նշված գումարը տրամադրվում է Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ով սահմանված նախահաշվով:

Չի կատարվել պայմանագրի 1.10 կետի պահանջը, այն է՝ պայմանագրի 1.6 կետում նշված գումարը տրամադրվում է Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ով սահմանված նախահաշվով: Պայմանագրի 1.6 կետով տրամադրվելիք գումարները (պետական միջոցներից հատկացված գումարները) պետք է ծախսվեն սահմանված նախահաշվով և կարգով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Չի կատարվել պայմանագրի 2.1.6. կետի պահանջը, այն է՝ վերահսկել Ֆիլմարտադրության կողմից սույն պայմանագրի 1.5 և 1.6 կետում (տրամադրվելիք գումարները՝ պետական միջոցներից հատկացված գումարները պետք է ծախսվեն համաձայն նախահաշվի) նշված գումարների նպատակային օգտագործումը՝ ըստ ներկայացված նախահաշվի: Ընդ որում՝ այս պարագայում ֆիլմարտադրության կողմից պետական միջոցներից հատկացված գումարները պետք է ծախսվեն օրենքով սահմանված կարգով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Պայմանագրի 2.3.14 կետով նախատեսվել է, որ Կինոկենտրոնի պահանջով ներկայացնել վերջինիս պայմանագրի կատարմանը վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ինչը չի կատարվել: Կինոկենտրոնը չի օգտվել այդ իրավունքից՝ ներդրումների և իրական մասնաբաժնի չափերը հստակեցնելու համար:

Ֆիլմի ցուցադրումից որևէ գումար չի մուտքագրվել Կինոկենտրոնի արտաբյուջետային հաշիվ:

«Ձյունանուշ» - Լիամետրաժ կինոնախագծի նկարահանման աշխատանքների մասնակցության հայտադիմումը պրոդյուսորի կողմից Կինոկենտրոն է ներկայացվել 2013 թվականին, որում նախագծի ընդհանուր բյուջեն նախատեսվել է 75,000.0 հազ. դրամ: Արտադրողի ներդրման չափը նախատեսվել է 21,000.0 հազ. դրամ, իսկ

համաարտադրողի ներդրման չափը՝ 12,000.0 հազ. դրամ: Կինոկենտրոնից ակնկալվող գումարի չափը կազմել է 42,000.0 հազ. դրամ:

17.11.2015թ.-ին Կինոկենտրոն ներկայացված ֆիլմերի նախագծերն ուսումնասիրող Գեղարվեստական խորհուրդը, սցենարների և նախագծերի գնահատման ու լսումների արդյունքում կազմված արձանագրությամբ, որոշել են պետական ֆինանսավորում տրամադրել «Ձյունանուշ» մանկական խաղարկային կինոնկարի արտադրության համար:

02.05.2017թ.-ին Կինոկենտրոնի և պրոդյուսորի միջև կնքվել է ֆիլմի արտադրության պայմանագիր, համաձայն որի պրոդյուսերը պարտավորվում է սահմանված վճարի դիմաց պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել «Ձյունանուշ» խաղարկային կինոնկարի արտադրությունը և այլ ծառայությունները, որի արդյունքը, համաձայն պայմանագրի 2.3.6 կետի, Կինոկենտրոնին հանձնվում են նախահաշվի ծախսային հոդվածներին համապատասխան սկզբնական հաշվառման փաստաթղթերի կրկնօրինակների տեսքով, որոնց ընդունման դեպքում ստորագրվում է հանձնման-ընդունման ակտը:

Պայմանագրի 1.5 կետով սահմանվել է ֆիլմի ընդհանուր բյուջեն՝ 75,158.0 հազ. դրամ, որից պրոդյուսերի ներդրման չափը 1.7 կետով կազմում է 33,615.0 հազ. դրամ, կամ ընդհանուր բյուջեի 44.7%-ը, իսկ Կինոկենտրոնի ներդրման չափը պայմանագրի 1.6 կետով նախատեսվել է 41,543.0 հազ. դրամ՝ 55.3%, որից 2017 թվականին պետք է ֆինանսավորվի 16,543.0 հազ. դրամ, իսկ 2018 թվականին՝ 25,000.0 հազ. դրամ:

Ֆիլմի հանձնման ժամկետ է սահմանվել՝ աշխատանքային կրիչով՝ 30.12.2018թ.-ին, որի վերաբերյալ կողմերը ստորագրում են հանձնման-ընդունման ակտ:

30.11.2018թ. Կինոկենտրոնի և «Հայասա ֆիլմ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ապրանքների հանձնման-ընդունման ակտ», համաձայն որի պրոդյուսերի կողմից հանձնվել, իսկ Կինոկենտրոնը ընդունել է «Ձյունանուշ» ֆիլմը՝ 70 րոպե տևողությամբ՝ Mov ֆորմատի կրիչով: Ակտում նշված չէ ապրանքի (ֆիլմի) արտադրության համար կատարված փաստացի ծախսերի հանրագումարը, որի արդյունքում հնարավոր չէ հաշվարկել ՀՀ

պետական բյուջեից կատարված ներդրման փաստացի փայաբաժինը, իսկ ֆիլմի ցուցադրումից՝ նաև ակնկալվող եկամուտները:

Ֆիլմի ցուցադրումից Կինոկենտրոնի արտաբյուջետային հաշիվ է մուտքագրվել 1,690.0 հազ. դրամ:

2018 թվականի խաղարկային կինոնկարների արտադրության վերաբերյալ

ՀՀ մշակույթի նախարարության և Կինոկենտրոնի միջև կնքվել սուբսիդիայի տրամադրման 3 պայմանագրեր՝ 274,440.0 հազ. դրամ գումարով, համաձայն որի Կինոկենտրոնը պարտավորվում է պայմանագրով սահմանված վճարի դիմաց աջակցել 11 խաղարկային ֆիլմերի, 4 կարճամետրաժ ֆիլմերի և 5 խաղարկային ֆիլմերի սցենարական հայտի զարգացման արտադրությանը: Փաստացի պրոդյուսերական ընկերություններին փոխանցվել է 211,878.0 հազ. դրամ (հավելված 2):

ՀՀ մշակույթի նախարարի 17.03.2018թ. թիվ 116-Ա հրամանով հաստատվել է «Ֆիլմի նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման» նոր կանոնակարգը, համաձայն որի Կինոկենտրոնը պետք է իրականացնեի իր գործունեությունը, իսկ ՀՀ մշակույթի նախարարի 18.07.2018 թվականի թիվ 375-Ա որոշմամբ հաստատվել է «Ֆիլմի նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման մասնագիտական հանձնաժողովի կազմը»:

Համաձայն կանոնակարգի, «խաղարկային և վավերագրական անվանակարգով» ֆիլմերի արտադրության ֆինանսավորման համար դրվել են սահմանափակումներ, համաձայն որի լիամետրաժ կինոնախագծերի «զարգացման փուլում» հատկացվող գումարի չափը նախատեսվել է մինչև 3 մլն դրամ, «արտադրության փուլում»՝ մինչև 50 մլն դրամ, «հետարտադրական փուլում»՝ 10 մլն դրամ:

հաշվեքննությամբ պարզվեց.

«Սև այգի, կապույտ երկինք» - Լիամետրաժ կինոնախագծի նկարահանման աշխատանքների մասնակցության հայտադիմումը պրոդյուսորի m,, («Անէվա պրոդակշն»

ՍՊԸ) կողմից Կինոկենտրոն է ներկայացվել 20.04.2018թ.-ին, որում նախագծի ընդհանուր բյուջեն նախատեսվել է 708,000.0 հազ. դրամ: Արտադրողի ներդրման չափը նախատեսվել է 105,000.0 հազ. դրամ, իսկ համաարտադրողների (EURIMAGES, Բելգիական կինոարտադրող՝ KWASS FILMS և Ֆրանսիական կինոարտադրող՝ SISTER Productions ընկերություններ) ներդրման չափը՝ 560,000.0 հազ. դրամ: Կինոկենտրոնից ակնկալվող գումարի չափը կազմել է 43,000.0 հազ. դրամ:

22.06.2018թ.-ին Կինոկենտրոնի և «Անէվա պրոդակշն» ՍՊԸ-ի միջև կնքվել է ֆիլմի արտադրության պայմանագիր, համաձայն որի պրոդյուսերը պարտավորվում է սահմանված վճարի դիմաց պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել «Սև այգի, կապույտ երկինք» պայմանական վերնագրով խաղարկային կինոնկարի արտադրությունը և այլ ծառայությունները, որի արդյունքը, համաձայն պայմանագրի 1.2 կետի, Կինոկենտրոնին հանձնվում են՝ նախահաշվի ծախսային հոդվածների համապատասխան սկզբնական հաշվառման փաստաթղթերի կրկնօրինակների տեսքով, որոնց ընդունման դեպքում ստորագրվում է հանձնման-ընդունման ակտը:

Պայմանագրի 1.6 կետով սահմանվել է ֆիլմի ընդհանուր բյուջեն՝ 708,000.0 հազ. դրամ,որից համաարտադրողների ներդրման չափը՝

- Ֆրանսիական կինոարտադրող «SISTER Productions» ընկերություն՝ ֆիլմի ընդհանուր բյուջեի 69.78%, որը կազմում է 851.613 եվրոյին համարժեք՝ 494,042.4 հազ. դրամ,
- Բելգիական կինոարտադրող «KWASS FILMS» ընկերություն՝ 15.62%, որը կազմում է 190.630 եվրոյին համարժեք՝ 110,589.6 հազ. դրամ,
- «Անէվա պրոդակշն» ՍՊԸ ընկերություն՝ ֆիլմի ընդհանուր բյուջեի 8.6%, որը կազմում է 60,368.0 հազ. դրամ:

Կինոկենտրոնի ներդրման չափը՝ պայմանագրի 1.7 կետով, նախատեսվել է 43.000.0 հազ. դրամ, կամ ընդհանուր բյուջեի 6.0%:

Ֆիլմի հանձնման ժամկետ է սահմանվել՝ DVD կրիչներով 30.04.2019թ.-ը, որի վերաբերյալ կողմերը ստորագրում են հանձնման-ընդունման ակտ, իսկ DCP և Blue Ray կրիչներով՝ 20.12.2019թ.ին: Ֆիլմի արտադրության ավարտման ժամկետ է նախատեսվել 30.09.2018թ.-ը:

Պայմանագրով չի նախատեսված Կինոկենտրոնի կողմից պրոդյուսերական ընկերության ներդրումների արժանահավատության նկատմամբ վերահսկողական կամ հաշվետվողականության գործառույթներ

Հարկ է նշել, որ վերոհիշյալ տոկոսային հարաբերությամբ պետք է բաշխվեն նաև ֆիլմի ցուցադրումներից գոյացած եկամուտները, եթե կողմերի ստանձնած ներդրումային պարտավորությունները կատարվեն ամբողջությամբ: Մինչդեռ, պայմանագրով չի նախատեսված Կինոկենտրոնի կողմից պրոդյուսերական ընկերության ներդրումների արժանահավատության նկատմամբ վերահսկողական կամ հաշվետվողականության գործառույթներ, իսկ ֆիլմի հանձնման-ընդունման ակտում չի արտացոլվում պրոդյուսերական ընկերության կողմից ֆիլմի արտադրության համար կատարված փաստացի ծախսերի հանրագումարը: Պայմանագրի 2.3.4 կետը՝ Պրոդյուսերական ընկերությանը պարտավորեցնում է 1.7 և 1.8 կետերում նշված գումարների նախահաշվի հետ Կինոկենտրոն ներկայացնել նաև ֆինանսավորման գրաֆիկ՝ որպես պայմանագրի անբաժանելի հավելված՝ ինչը չի կատարվել:

Կինոկենտրոնը, չունենալով ֆիլմերի նախագծերն ուսումնասիրող հանձնախումբի կողմից պետական ֆինանսավորման տրամադրման որոշում, պրոդյուսերական ընկերության հետ կնքել է պայմանագիր

Կինոկենտրոնը , չունենալով ֆիլմերի նախագծերն ուսումնասիրող հանձնախումբի կողմից պետական ֆինանսավորման տրամադրման որոշում , 22.06.2018 թվականին պրոդյուսերական ընկերության հետ կնքել է պայմանագիր: Հարկ է նշել , որ Կինոկենտրոն ներկայացված ֆիլմերի նախագծերն ուսումնասիրող հանձնախումբը որոշել

է պետական ֆինանսավորում տրամադրել «Սև այգի, կապույտ երկինք» խաղարկային կինոնկարի արտադրության համար ավելի ուշ՝ 25.09.2018թ.-ին:

Ֆիլմերի նախագծերն ուսումնասիրող հանձնախումբը, ուսումնասիրելով ֆիլմի սցենարը և դերասանական կազմը, որպես մասնագիտական որակավորում ունեցող հանձնախումբ, պետք է գնահատեր ֆիլմի նախահաշվի իրատեսական լինելը: Այսպես, նախապատրաստական շրջանի ծախսեր է նախատեսվել՝ 38,761.0 հազ. դրամ, իսկ արտադրական շրջանի ծախսերը՝ 368,950.0 հազ. դրամ, այդ թվում «այլ ծախսեր»՝ 72,600.0 հազ. դրամ, հետարտադրական շրջանի ծախսերը՝ 142,000.0 հազ. դրամ, չնախատեսված ծախսերը՝ 65,965.32 հազ. դրամ, հարկերը՝ 92,351.5 հազ. դրամ և այլն:

06.11.2018թ. ՀՀ մշակույթի նախարարության և Կինոկենտրոնի միջև կնքված սուբսիդիայի տրամադրման պայմանագրով «Սև այգի, կապույտ երկինք» խաղարկային կինոնկարի արտադրության համար հատկացվել է 43,000.0 հազ. դրամ: Կինոկենտրոնի կողմից «Անէվա պրոդակշն» ՍՊ ընկերությանը գումարը փոխանցվել է երեք մասնաբաժիններով՝ 01.11.2018թ.-ին՝ 15,000.0 հազ. դրամ, 16.11.2018թ.-ին՝ 15,000.0 հազ. դրամ, և 30.11.2018թ.-ին՝ 13,000.0 հազ. դրամ: Կինոկենտրոն ներկայացված պրոդյուսորի կողմից կատարված ծախսային հոդվածների հաշվեքննության արդյունքում պարզվեց, որ համաձայն տարբեր ֆիզիկական անձանց հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի, ֆիլմի նկարահանման աշխատանքները իրականացվել են օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ Արցախի հանրապետությունում: Տրանսպորտային ծառայությունների և մեքենաների վարձակալության համար կնքվել և կանխիկ վճարվել է 8,375.0 հազ. դրամ, լուսավորման աշխատանքների համար՝ 2,100.0 հազ. դրամ, վճարվել է շրջանառության հարկ՝ 2,150.0 հազ. դրամ: Հյուրանոցային ծառայությունների համար կնքվել են պայմանագրեր «Զբոսաշրջության կենտրոն» ՓԲԸ-ի և «Միջազգային Բիզնես Կենտրոն» ՓԲԸ-ի (ք. Ստեփանակերտ) հետ, որոնց փոխանցվել է համապատասխանաբար՝ 14,355.0 հազ. դրամ և 16,020.0 հազ. դրամ, ընդամենը՝ 43,000.0 հազ. դրամ:

30.04.2019թ. Կինոկենտրոնի և «Անէվա պրոդակշն» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ապրանքների հանձնման-ընդունման ակտ», համաձայն որի պրոդյուսերի կողմից հանձնվել, իսկ Կինոկենտրոնի կողմից ընդունվել է «Սև այգի, կապույտ երկինք» ֆիլմը՝ 96 րոպե տևողությամբ DVD տեսասկավառակով: Ակտում նշված չէ ապրանքի փաստացի գինը, որի արդյունքում հնարավոր չէ հաշվարկել ՀՀ պետական բյուջեից կատարված ներդրման փաստացի փայաբաժինը, իսկ ֆիլմի ցուցադրումից՝ նաև ակնկալվող եկամուտները:

Հարկ է նշել, որ «Սև այգի, կապույտ երկինք» ֆիլմի արտադրության համար, համաձայն Եվրոպայի խորհրդի «Եվրոմաժ» հիմնադրամի 28.09.2018թ. արձանագրության, օգնություն է հատկացվել՝ 200.000 եվրոյի չափով: Հարկ է նշել, որ Կինոկենտրոնը անդամակցում է այս կազմակերպությանը և ՀՀ մշակույթի նախարարության «միջոցառումների իրականացման /դրամաշնորհ/» ծրագրով յուրաքանչյուր տարի վճարվում անդամավճար՝ 117-120 հազ. եվրոյի չափով:

Գումարը բաշխվել է համապատասխանաբար՝ ֆրանսիական կինոարտադրող «SISTER Productions» պրոդյուսերական ընկերությանը՝ 126.560 եվրո (63.28%), բելգիական կինոարտադրող «KWASS FILMS» ընկերությանը՝ 33.000 եվրո (16.5%), իսկ «Անէվա պրոդակշն» ՍՊԸ ընկերությանը՝ 40.440 եվրո (20.22%):

«Անէվա պրոդակշն» ՍՊԸ ընկերությանը գումարը փոխանցվել է՝ 06.09.2018թ.-ին՝ 25.000 եվրո կամ 14,008.8 հազ. դրամ, 19.09.2018թ.-ին՝ 16,000 եվրո կամ 9,049.5 հազ. դրամ, և 28.09.2018թ.-ին՝ 8.900 եվրո կամ 4,980.9 հազ. դրամ, ընդամենը՝ 28,039.2 հազ. դրամ:

20.12.2019թ. «Անէվա պրոդակշն» ՍՊԸ-ի կողմից Կինոկենտրոն է ներկայացվել ֆիլմի արտադրության ծրագրով կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն, համաձայն որի, բացի բյուջեից հատկացված 43,000.0 հազ. դրամի ծախսերը, իր և համաարտադրողների կողմից կատարվել են՝ աշխատավարձի հոդվածով՝ 192,616.0 հազ. դրամի ծախս, նկարահանման և լուսավորման ծախս՝ 85,965.0 հազ. դրամ, գունաշտկում՝

29,000.0 հազ. դրամ, մոնետաժային ծառայություններ՝ 57,000.0 հազ. դրամ, ձայնագրում՝ 41,741.0 հազ. դրամ, բեմական և բեմադրական ծախսեր՝ 23,000.0 հազ. դրամ, տրանսպորտային ծառայություն՝ 9,835.0 հազ. դրամ, գործուղում՝ 35,450.0 հազ. դրամ, այլ ուղղակի ծախսեր՝ 88,013.4 հազ. դրամ և վճարված հարկեր՝ 88,147.6 հազ. դրամ, ընդամենը՝ 605,483.0 հազ. դրամ:

«Սուսերով պար» - Լիամետրաժ կինոնախագծի նկարահանման աշխատանքների մասնակցության հայտադիմումը «ԴիԷմԷյՋ Ստուդիո» ՍՊԸ-ի կողմից Կինոկենտրոն է ներկայացվել 30.10.2017թ.-ին, որում նախագծի ընդանուր բյուջեն նախատեսվել է 61,625.5 հազ. ՌԴ ռուբլի: Արտադրողի ներդրման չափը նախատեսվել է 49,727.69 հազ. ՌԴ ռուբլի, իսկ որպես համաարտադրողներ նախատեսվել են «Մարս Մեդիա Ինտերթեյմոդ» պրոդյուսերական ընկերության մասնակցությունը և ներկայացրել 06.02.2018թ.-ին վերջինիս հետ կնքված պայմանագիրը: Կինոկենտրոնից ակնկալվող գումարի չափը կազմել է 97,800.0 հազ. դրամ:

20.03.2018թ.- Կինոկենտրոն ներկայացված ֆիլմերի նախագծերն ուսումնասիրող Գեղարվեստական խորհուրդը, սցենարների և նախագծերի գնահատման ու լսումների արդյունքում որոշել է պետական ֆինանսավորում տրամադրել «Սուսերով պար» վերնագրով խաղարկային կինոնկարի արտադրության համար:

05.05.2018թ. ՀՀ մշակույթի նախարարության և Կինոկենտրոնի միջև կնքված սուբսիդիայի տրամադրման պայմանագրով «Սուսերով պար» խաղարկային կինոնկարի արտադրության համար հատկացվել է 50,000.0 հազ. դրամ:

05.05.2018թ. Կինոկենտրոնի և «ԴիԷմԷյՋ Ստուդիո» ՍՊԸ-ի միջև, հիմք ընդունելով ՀՀ մշակույթի նախարարության և Կինոկենտրոնի միջև 05.05.2018թ.-ին կնքված թիվ 19 սուբսիդիայի տրամադրման պայմանագիրը, կնքվել է ֆիլմի արտադրության պայմանագիր, համաձայն որի պրոդյուսերը պարտավորվում է սահմանված վճարի դիմաց պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել «Սուսերով պար» պայմանական վերնագրով խաղարկային կինոնկարի արտադրությունը, որի արդյունքը,

համաձայն պայմանագրի 1.2 կետի, Կինոկենտրոնին հանձնվում են նախահաշվի ծախսային հոդվածներին համապատասխան սկզբնական հաշվառման փաստաթղթերի կրկնօրինակների տեսքով, որոնց ընդունման դեպքում ստորագրվում է հանձնման-ընդունման ակտը:

Պայմանագրով սահմանված չէ, թե մնացած գումարը ում կողմից է ներդրվելու, իսկ համաարտադրողի մասին պայմանագրում անդրադարձ չկա

Պայմանագրի 1.6 կետով սահմանվել է ֆիլմի ընդհանուր բյուջեն՝ 61,625.5 հազ. ՌԴ ռուբլի, կամ 522,584.24 հազ. դրամ, որից 1.7 կետով՝ Կինոկենտրոնի ներդրման չափը նախատեսվել է 97.800.0 հազ. դրամ: 50,000.0 հազ. դրամը

տրամադրվում է 2018 թվականին, իսկ 47,800.0 հազ. դրամը՝ 2019 թվականին:

Պայմանագրով սահմանված չէ, թե մնացած գումարը ում կողմից է ներդրվելու, իսկ համաարտադրողի մասին պայմանագրում անդրադարձ չկա:

Ֆիլմի արտադրության ավարտման ժամկետ է սահմանվել՝ վերջնական կրիչով 2019 թվականի ապրիլ ամիսը:

Պայմանագրի 2.3.4 կետը Պրոդյուսերական ընկերությանը պարտավորեցնում է 1.6 և 1.7 կետերում նշված գումարների նախահաշվի հետ Կինոկենտրոն ներկայացնել նաև ֆինանսավորման գրաֆիկ, որպես պայմանագրի անբաժանելի հավելված, որը չի կատարվել:

Պայմանագրի 2.1.1 կետով Կինոկենտրոնին վերապահվել է իրավունք իրականացնել վերահսկողություն 1.7 կետում նշված գումարների նպատակային օգտագործման նկատմամբ, իսկ 2.1.5 կետով՝ իրականացնել աուդիտ պրոդյուսերական ընկերությունում՝ ֆիլմի արտադրության մասով: Կինոկենտրոնը չի օգտվել այդ իրավունքից՝ ներդրումների և իրական մասնաբաժնի չափերը հստակեցնելու համար:

Պայմանագրի 3-րդ կետով՝ ֆիլմի շահույթի բաշխման կարգով, նախատեսվել է՝

- ամբողջ աշխարհում ֆիլմի տարածման իրականացման դեպքում ֆիլմի օգտագործման արդյունքից 5%-ի վճարում Կինոկենտրոնին,

- ՀՀ տարածքում դիստրիբյուցիա իրականացնելու դեպքում՝ վճարվում է 20%:

95%-մասնաբաժինը, որ կազմակերպությունն է ստանալու՝ պայմանագրում առկա չէ:

Հարկ է նշել, որ պայմանագրի 4-րդ կետով պրոդյուսերական ընկերությանն է վերապահվել ֆիլմի նկատմամբ օգտագործման բացառիկ իրավունքը և հեղինակային բոլոր իրավունքները: Մինչդեռ, համաձայն «Մարս Մեդիա Ինտերթեյմոդ» պրոդյուսերական ընկերության և «Դիէմէյչ Ստուդիո» ՍՊ ընկերության միջև կնքված պայմանագրի, որում առաջինի ներդրումը կազմում է 48,377.3 հազ. ՌԴ ռուբլի (410,239.5 հազ. դրամ), կամ 78.5%, իսկ ՍՊԸ-ի ներդրումը 13,248.2 հազ. ՌԴ ռուբլի (112,344.7 հազ. դրամ) կամ 21.5%, ռուսական պրոդյուսերական ընկերությանն է վերապահվել ֆիլմի նկատմամբ օգտագործման բացառիկ իրավունքը և հեղինակային բոլոր իրավունքները: Բացի այդ, «Դիէմէյչ Ստուդիո» ՍՊ ընկերության ներդրումը պետք է կազմի 14,544.7 հազ. դրամ՝ հաշվի առնելով Կինոկենտրոնի կողմից ներդրվող 97,800.0 հազ. դրամը:

18.12.2018թ. Կինոկենտրոնի և «Դիէմէյչ Ստուդիո» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ապրանքների հանձնման-ընդունման ակտ», համաձայն որի պրոդյուսերի կողմից հանձնվել, իսկ Կինոկենտրոնի կողմից ընդունվել է «Սուսերով պար» ֆիլմը՝ 88 րոպե տևողությամբ DVD տեսասկավառակով՝ ավարտված DEMO տարբերակով:

26.03.2019թ.-ին Կինոկենտրոնի և «Դիէմէյչ Ստուդիո» ՍՊԸ-ի միջև կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, համաձայն որի ֆիլմի ընդհանուր բյուջեն կազմել է 508,984.2 հազ. դրամ, իսկ Կինոկենտրոնի ներդրման գումարը սահմանվել է 84,200.0 հազ. դրամ: Ֆիլմի արտադրության ավարտման ժամկետ է սահմանվել՝ վերջնական կրիչով 2019 թվականի հունիսի 15-ը, իսկ պայմանագրի 3.1 կետով նախատեսված փայաբաժինը նվազել է՝ համապատասխանաբար 4% և 17%:

05.09.2019թ. ՀՀ մշակույթի նախարարության և Կինոկենտրոնի միջև կնքված դրամաշնորհի տրամադրման պայմանագրով «**Սուսերով պար**» պայմանական վերնագրով խաղարկային կինոնկարի արտադրության համար հատկացվել է 41,040.0 հազ. դրամ:

30.11.2019թ.-ին «ԴիԷմԷյչ Ստուդիո» ՍՊ պրոդյուսերական ընկերությունը ներկայացրել է ֆիլմի վրա կատարված ծախսերի ընդհանուր հանրագումարը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների, համաձայն որի Կինոկենտրոնի կողմից կատարված ֆինանսավորումը կազմել է 84,200.0 հազ. դրամ, իսկ այլ աղբյուրներից համաֆինանսավորումը՝ 424,784.0 հազ. դրամ, ընդամենը՝ 508,984.0 հազ. դրամ:

02.10.2019թ. Կինոկենտրոնի և «ԴիԷմԷյչ Ստուդիո» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ապրանքների հանձնման-ընդունման ակտ», համաձայն որի պրոդյուսերի կողմից հանձնվել, իսկ Կինոկենտրոնի կողմից ընդունվել է «Սուսերով պար» ֆիլմը՝ 92.4 րոպե տևողությամբ՝ DCP 2K /2048*1080/ տեսասկավառակով՝ ավարտված տարբերակով:

Ֆիլմի ցուցադրումից որևէ գումար չի մուտքագրվել Կինոկենտրոնի արտաբյուջետային հաշիվ:

«Սողանք» - Լիամետրաժ գեղարվեստական ֆիլմի հետարտադրական աշխատանքները իրականացնելու համար 10.12.2018թ.-ին Կինոկենտրոնի և «Ֆրամատ» մշակութային հիմնադրամի միջև, հիմք ընդունելով ՀՀ մշակույթի նախարարության և Կինոկենտրոնի միջև 05.12.2018 թվականին կնքված թիվ 86 սուբսիդիայի տրամադրման պայմանագիրը, կնքվել է ֆիլմի արտադրության պայմանագիր, համաձայն որի պրոդյուսերը պարտավորվում է սահմանված վճարի դիմաց պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել **«Սողանք»** լիամետրաժ գեղարվեստական ֆիլմի հետարտադրական աշխատանքները, որի արդյունքը, համաձայն պայմանագրի 1.2 կետի, Կինոկենտրոնին հանձնվում են՝ նախահաշվի ծախսային հոդվածների համապատասխան սկզբնական հաշվառման փաստաթղթերի կրկնօրինակների տեսքով, որոնց ընդունման դեպքում ստորագրվում է հանձնման-ընդունման ակտը:

Պայմանագրի 1.5 կետով սահմանվել է ֆիլմի ընդհանուր բյուջեն՝ 136,361.8 հազ. դրամ, որից Կինոկենտրոնի ներդրման չափը կազմել է 134,561.8 հազ. դրամ: «Ֆրամատ» մշակութային հիմնադրամի ներդրման չափը կազմել է 1,800.0 հազ. դրամ:

Ֆիլմի արտադրությունից 13 տարի հետո, Գեղարվեստական խորհրդի 05.10.2017թ.-ի որոշմամբ, ֆինանսավորվել է անավարտ մնացած ծրագիր:

Ֆիլմի արտադրության աշխատանքները պրոդյուսերական ընկերությունը իրականացրել է 2004 թվականին, որի համար «Հայֆիլմ կինոստուդիա» պետական ձեռնարկության (ՊՈԱԿ) կողմից, որի իրավահաջորդն է Կինոկենտրոնը՝ 2006 թվականից, հատկացվել է 127,561.8 հազ. դրամ: Այս պայմանագրով նախատեսվում է Կինոկենտրոնի կողմից ևս 7,000.0 հազ. դրամի հատկացում՝ հետարտադրական աշխատանքների կատարման համար, ինչը նախկինում չէր կատարվել: Պայմանագրի 3-րդ կետի համաձայն, ֆիլմի շահույթի բաշխումը նախատեսվել է՝ Կինոկենտրոն՝ 98.7%, Հիմնադրամ՝ 1.3%: Փաստորեն ֆիլմի արտադրությունից 13 տարի հետո, Գեղարվեստական խորհրդի 05.10.2017թ.-ի որոշմամբ, ֆինանսավորվել է անավարտ մնացած ծրագիր:

Գեղարվեստական խորհրդի նույն որոշմամբ նախատեսվել է նաև «**Չնչիկ**» (ռեժ.՝ Ա. Շահբազյան) անվանումով լիամետրաժ գեղարվեստական ֆիլմի հետարտադրական աշխատանքները իրականացնելու համար հատկացնել 16,500.0 հազ. դրամ, որը նախկինում չէր կատարվել: Ֆիլմարտադրության աշխատանքները իրականացրել էր «Իլիուզիոն Պրոդակշն» ՍՊԸ-ն դեռևս 2008 թվականին, և Կինոկենտրոնի մասնակցությունը այս ֆիլմի ֆինանսավորման համար կազմել էր 57,182.5 հազ. դրամ, ինչը ավելանում է ևս 16,500.0 հազ. դրամով: Պայմանագրի 3-րդ կետի համաձայն, ֆիլմի շահույթի բաշխմանը նախատեսվել է անդրադառնալ ֆիլմի ամբողջական ավարտման դեպքում առանձին համաձայնագրով:

Համաձայն Կինոկենտրոնի և պրոդյուսերական ընկերությունների միջև կնքված պայմանագրերի համապատասխան կետերի՝ Կինոկենտրոնը պետք է հսկեր պրոդյուսերի կողմից ներդրված գումարների ծախսերը՝ ըստ ներկայացված նախահաշվի: Վերջինիս կողմից չի կատարվել պայմանագրերի համապատասխան կետերի պահանջները:

Պրոդյուսերական ընկերությունների կողմից չեն ապահովվել պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող ֆինանսավորման գրաֆիկները, ինչը որպես «հավելված 1» չեն ներկայացվել Կինոկենտրոն («Անխելը մարդը», «Վերադարձողները», «Սպիրակ», «Ոչ թեթև ուշագնացություն», «Տափիկիս վարսերը», «Գնեմ վաճառեմ», «Ճանապարհ», «Ձյունանուշ», «Սև այգի, կապույտ երկինք» ֆիլմերը):

Պայմանագրի կետով նախատեսվել է, որ «պրոդյուսերը անվերապահորեն ընդունում է և չի առարկում, որ Կինոկենտրոնի կողմից պարտավորությունների կատարումը հնարավոր է միմիայն պրոդյուսերի կողմից ներդրված գումարների վերաբերյալ ծախսային փաստաթղթերը Կինոկենտրոն ներկայացնելուց հետո»: Պրոդյուսերական ընկերությունները Կինոկենտրոն չեն ներկայացրել պայմանագրերով սահմանված իրենց կողմից կատարված ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունները, իսկ Կինոկենտրոնը չի կատարել ֆինանսավորման դադարեցումը («Անխելը մարդը», «Վերադարձողները», «Սպիրակ», «Ոչ թեթև ուշագնացություն», «Տափիկիս վարսերը», «Գնեմ վաճառեմ», «Ճանապարհ», «Ձյունանուշ» ֆիլմերը):

Պրոդյուսերական ընկերության կողմից չի ապահովվել պայմանագրի պահանջը, այն է՝ Կինոկենտրոնի կողմից հատկացված գումարների ծախսման վերաբերյալ պետք է ներկայացվեր հաշվետվություն: Ընդ որում՝ հաշվետվությունը ներկայացվում է ֆինանսավորման գրաֆիկով սահմանված յուրաքանչյուր ժամանակահատվածի համար /ֆինանսավորման գրաֆիկի մասով/ («Անխելը մարդը», «Վերադարձողները», «Սպիրակ», «Ոչ թեթև ուշագնացություն», «Տափիկիս վարսերը», «Գնեմ վաճառեմ», «Ճանապարհ», «Ձյունանուշ» ֆիլմեր):

«Ապրանքների հանձնման-ընդունման» ակտում նշված չէ ապրանքի (ֆիլմի) արտադրության համար կատարված փաստացի ծախսերի հանրագումարը, որի արդյունքում հնարավոր չէ հաշվարկել ՀՀ պետական բյուջեից կատարված ներդրման փաստացի փայաբաժինը, իսկ ֆիլմի ցուցադրումից՝ նաև ակնկալվող եկամուտները /«Անխելը մարդը», «Սպիտակ», «Վերադարձողները», «Ոչ թեթև ուշագնացություն», «Տարիկիս վարսերը», «Գնեմ վաճառեմ», «Նրա մասին», «Ճանապարհ», «Ձյունանուշ», «Սև այգի, կապույտ երկինք» ֆիլմեր/:

Համադրվել են պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված, 2017-2018 թվականներին պրոդյուսերական ընկերությունների կողմից, որպես մատակարար հարկային հաշիվ դուրս գրված և որպես գնորդ՝ հարկային հաշիվ ստացած գումարների վերաբերյալ տեղեկատվությունը և ֆիլմերի նկարահանման համար կատարված ծախսերը /ներդրումները/ (հավելված 3):

Հարկ է նշել, որ ֆիլմերի արտադրության համար Կինոկենտրոնի մասնակցությունից (մասնաբաժին) գոյացած գումարները պետք է կուտակվեն Կինոկենտրոնի արտաբյուջետային հաշվում և ուղղվեն ՊՈԱԿ-ի կանոնադրական գործառույթների իրականացմանը՝ համաձայն ՀՀ մշակույթի նախարարության կողմից հաստատված նախահաշվի: 2017 թվականին Կինոկենտրոնի մասնակցությամբ նկարահանված ֆիլմերի ցուցադրումից արտաբյուջե է մուտքագրվել՝ 3,606.3 հազ. դրամ, 2018 թվականին՝ 764,4 հազ. դրամ, իսկ 2019 թվականի 9 ամիսներին մուտքերը կազմել է 1,846.0 հազ. դրամ՝ այն պարագայում, երբ յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեից «խաղարկային կինոնկարների» արտադրության համար սուբսիդավորվել է 280,000.0-300,000.0 հազ. դրամ:

Այլ ծախսերի մասով

Ընտրանքային կարգով ուսումնասիրելով Կինոկենտրոնի դրամարկղից առհաշիվ տրված գումարները՝ արտասահմանյան գործուղումների մասով, պարզվեց, որ.

- «Գնեմ վաճառեմ» ֆիլմի նկարահանման նպատակով ֆիլմի բեմադրող-ռեժիսորը, ով նաև հանդիսանում է Կինոկենտրոնի կինոխմբագիրը, 06.05.2017թ., 05.06.2017թ. և 06.07.2017թ. ֆիլմի գործուղման ծախսերը հոգալու համար զեկուցագրերով դիմել է Կինոկենտրոնի տնօրեն Գ. Գևորգյանին և նույն ամսաթվերին ստացել համապատասխանաբար՝ 3,500,000, 4,500,000 և 1,000,000 դրամ առհաշիվ գումար, որոնք դրամարկղային ելքի օրդերներում ձևակերպվել են որպես ֆիլմի արտադրական ծախսեր: 23.11.2017 թվականին բեմադրող-ռեժիսորը Կինոկենտրոնի դրամարկղ է մուտքագրել 3,255.4 հազ. դրամ, իսկ 5,653.1 հազ.դրամը ձևակերպվել է որպես ք. Մոսկվա (նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 28-ը) գործուղման ծախսեր, 227.0 հազ. դրամը՝ ուղղակի ծախսեր:

Խախտվել է «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, համաձայն որի «միևնույն անձին առհաշիվ կանխիկ դրամ չի կարող տրվել, եթե նրա կողմից նախկինում ստացված առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվությունը կազմակերպությունում այդ հաշվետվությունների ընդունման համար պատասխանատուին դեռևս չի ներկայացվել, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետվության ներկայացման ժամկետը չի լրացել»:

- Համաձայն ՀՀ մշակույթի նախարարության և Կինոկենտրոնի հետ 22.02.2017թ. կնքված դրամաշնորհի հատկացման թիվ 29 պայմանագրի, Հայաստանում կինոմատոգրաֆիայի ոլորտի բարեփոխումների, ինչպես նաև՝ միջազգային կառույցների հետ համագործակցության զարգացման նպատակով Երևան է ժամանել «Հոլիվուդ Պարտյորս» ընկերության պրոդյուսերը, ում ճանապարհածախսը (231,700 դրամ) և 2 ամսվա բնակարանի վարձավճարը

(528,000 դրամ) վճարվել է՝ համաձայն վերոնշյալ դրամաշնորհի պայմանագրի, ինչից հետո 26.07.2017 թվականից մինչև 2018 թվականի վերջը վերոհիշյալ անձը աշխատել է Կինոկենտրոնում՝ որպես գեղարվեստական ղեկավար-ֆիլմ հանձնակատար: Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի՝ տվյալ աշխատակցի անձնական գործում պետք է լիներ կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայական, ինչը չի տրամադրվել ՀՀ Հաշվեքննիչ պալատին, ինչպես նաև՝ համաձայն Կինոկենտրոնի «Գեղարվեստական ղեկավար-ֆիլմ հանձնակատարի» պաշտոնի անձնագրի 8-րդ կետի, նա պետք է ունենար բարձրագույն կրթություն և կինոյի բնագավառում 10 տարուց ոչ պակաս փորձ, որոնց մասին հավաստող փաստաթղթերը նույնպես չեն տրամադրվել: Այսինքն՝ պարզ չէ, թե այս աշխատակիցը ինչ կրթություն և մասնագիտական կարողություններ ունի և արդյոք նա կարող էր աշխատել այդ պաշտոնում:

Այլ տեղեկատվություն

Ընտրանքային կարգով հաշվեքննության ենթարկելով 01.01.17-31.12.18թթ.. ժամանակաշրջանում Կինոկենտրոնի կողմից կնքված նկարահանման և լուսավորման տեխնիկայի վարձակալության պայմանագրերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը պարզվեց.

Կինոկենտրոնը կինոարտադրության կազմակերպման գործընթացներում՝ ֆիլմերի /նոր և ընթացքի մեջ գտնվող/ նկարահանումներին օժանդակելու համար հիմնականում իրականացրել է նկարահանման և լուսավորման տեխնիկայի վարձակալության ծառայությունների մատուցման գնման գործընթացներ, որոնց արդյունքում ընտրված մասնակիցները՝ ֆիլմարտադրող պրոդյուսերական ընկերություններին տրամադրել են նկարահանման և լուսավորման տեխնիկա:

Ուսումնասիրելով 2017-2018թթ.. ընթացքում վարձակալած նկարահանման և լուսավորման տեխնիկայի գնման գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը /**Հավելված 4**/ պարզվեց, որ նկարահանման և լուսավորման տեխնիկայի վարձակալության ծառայություններ մատուցվել են 2017թ.-ին 63,38 մլն դրամ, իսկ 2018թ.-ին 1,67 մլն դրամ չափով:

Հարկ է նշել որ 2017թ.-ի հուլիս ամսվա դրությամբ գնման գործընթացներին մասնակցել և այնուհետև ծառայություններ է մատուցել միայն «Ապաթեոզ» ՍՊ ընկերությունը 58,87մլն դրամ ընդհանուր պայմանագրային գումարով /Աղյուսակ 2/:

Նշված ժամանակաշրջանում «Ապաթեոզ» ՍՊԸ-ի հետ կնքված թվով 6 պայմանագրերի գնման գործընթացները իրականացվել են բանակցային ընթացակարգերով, մեկ անձից գնումներ իրականացնելով, ինչպես նաև գնանշման հարցման եղանակով:

Ընտրանքային կարգով ուսումնասիրելով Հավելված 4-ում բերված «Ապաթեոզ» ՍՊ ընկերության հետ 11.07.2017թ-ին կնքված թիվ ՀԱԿԳՀԱՊՁԲ 17/06 պայմանագիրը 30,0 մլն

դրամ արժեքով, պետք է նշել, որ այն իրականացվել է գնանշման հարցման ընթացակարգով, որի գնման հայտը հաստատվել է 19.06.2017թ.-ին, իսկ ընթացակարգի հրավերը և հայտարարության տեքստը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հաստատվել և 21.06.2017թ.-ին ուղղարկվել է լիազոր մարմնին: Հայտարարությամբ ներկայացվող հայտերի բացման ժամկետ սահմանվել է 28.06.2017թ.-ը: Նշված ամսաթվին հայտ ներկայացրել է միայն «Ապաթեոզ» ՍՊ ընկերությունը և գնահատող հանձնաժողովի կողմից այն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից այնուհետև վերջինիս հետ կնքվել է թիվ ՀԱԿԳՀԱՊԶԲ 17/06 պայմանագիրը:

Հարկ է նշել, որ «Ապաթեոզ» ՍՊԸ-ի և Կինոկենտրոն հետ կնքված բոլոր պայմանագրերում որպես ՍՊ ընկերության տնօրեն հանդես է եկել անձ, ով միաժամանակ աշխատել է Կինոկենտրոնում որպես գլխավոր հաշվապահ:

Համաձայն ՊԵԿ-ի կողմից 18.12.2019թ. թիվ 6-1/79215-2019 գրությամբ տրամադրված տեղեկատվության վերոնշյալ անձը «Ապաթեոզ» ՍՊ ընկերությունում աշխատել է որպես տնօրեն 05.09.13թ.-ից մինչև 14.06.19թ.-ը:

Նույն տեղեկատվության համաձայն 04.01.2006-10.06.2019թթ.. ընթացքում վերոնշյալ անձը աշխատել է «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ում որպես գլխավոր հաշվապահ:

Ուսումնասիրելով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձնաց պետական ռեգիստրում ներառված տեղեկատվությունը /www.e-register.am/, պետք է նշել, որ «Ապաթեոզ» ՍՊ ընկերությունը հիմնադրվել է 2005թ.-ին և պետական ռեգիստրում գրանցվել է 11.11.2005թ.-ին, իսկ Ընկերության հիմնադիրները հանդիսացել «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի նախկին տնօրենի և փոխտնօրենի հետ փոխկապակցված անձինք/հաշվառված են նաև նույն հասցեում/:

Աղյուսակ 2

	Նկարագիր	Կինոկենտրոնի կողմից կնքված նկարահանման և լուսավորման տեխնիկայի վարձակալության պայմանագրեր /հազ. դրամ/					
		01.01.17- 31.07.17թթ..		01.08.17- 31.12.17թթ.	2018թ.	Ընդամենը /2017թ./	Ընդամենը /2018թ./
	2	3		4	5	6	7
	Կնքված պայմանագրերի գումարը՝ այդ թվում	11000*	48 293	4 082,5	1 670	63 375,5	1 670
	<<Ապաթեոզ>> ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրեր	11 000	47 873	-	-	58 873	
	Այլ անձանց հետ կնքված պայմանագրեր	420		4 082,5	1 670	4 502,5	1 670
*Ծանոթ.՝ < Ապաթեոզ> ՍՊԸ-ի հետ 16թ.-ին կնքված պայմանագրերից /58,36 մլն/ 11,0 մլն դրամի ծառայությունները մատուցվել են 17թ.-ին							

Հարկ է նշել, որ թիվ ՀԱԿԳՀԱՊԶԲ 17/06 ծածկագրով գնանշման հարցման հրավերով հաստատված գնման առարկայի /ըստ չափաբաժինների/ տեխնիկական բնութագրեր կազմվել են ապրանքների անվանումներին հղում կատարելով միաժամանակ նշելով «կամ համարժեք» բառերը մասնավորապես.

«Կինոխցիկ **Արրի Ալեքսա Էքս Թի Պյուս** /հավաքածու / ... կամ համարժեք» /չափաբաժին 1/,

«Լուսարձակ պարագաներով **Լեոնարդո 2000 Վտ** (Դեսիստի) /եռոտանիով / կամ համարժեք» /չափաբաժին 4/,

«Լուսային սարք **Արրի 2000 Վ** /եռոտանիով/ կամ համարժեք>> /չափաբաժին 9/,

«Դիզել գեներատոր **ԷՖ Ջի Վիլսոն Պե 88-Ե1** ավտոկցորդով կամ համարժեք» /չափաբաժին 13/ և այլն:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի՝

«Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ

անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Նկարահանման և լուսավորման տեխնիկայի վարձակալության գնման առարկաների պահանջը ձևավորվել է Պրոդյուսերական ընկերությունների կողմից «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված հայտերի հիման վրա:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի.

«Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվադրեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա»:

Ռեսուրսասիրելով 2017թ. ընթացքում «Ապաթեոզ» ՍՊԸ-ի և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրերով վարձակալված որոշ սարքերի վերաբերյալ տեղեկատվությունը /Աղյուսակ 3/ պարզվեց, որ օրինակ, թվային տեսախցիկ՝ **Ռեդ Ուան Բոդի** վարձակալության համար վճարվել է 5,72 մլն դրամ, կինոխցիկ՝ **Արրի Ալեքսա Էքս Թի Պյուս հավաքածուի** համար 19,85 մլն դրամ, իսկ գեներատոր՝ **FG Վիլսոն P88-Ե1** վարձակալության համար 8,7 մլն դրամ:

2017-2018թթ.. ընթացքում «Ապաթեոզ» ՍՊԸ ընկերությունը տեխնիկայի վարձակալության պայմանագրեր է կնքել նաև Պրոդյուսերական ընկերությունների հետ և Աղյուսակ 3-ում բերված են վերը նշված սարքավորումների վաճակալության գումարները:

Հաշվի առնելով այն հանգամանքները, որ Ա. Խ.-ը 2013թ.-ից աշխատել է «Ապաթեոզ» ՍՊԸ-ում որպես տնօրեն, միաժամանակ՝ 2006թ.-ից մինչև 2019թ.-ը

աշխատելով «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ում որպես գլխավոր հաշվապահ, ինչպես նաև այն փաստը, որ ՍՊԸ-ի հիմնադիրները հանդիսացել են «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրինության հետ փոխկապակցված անձիք /ՊՈԱԿ-ի նախկին տնօրենը աշխատել է 2006թ-ից մինչև 25.07.2017թ-ը/, վերլուծելվել է «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի և «Ապաթեոզ» ՍՊԸ-ի միջև, 2012-2017թթ.. ընթացքում կնքված առկա պայմանագրերը:

Աղյուսակ 3

Հ/Հ	Նկարագիր	<<ԱԿ>> ՊՈԱԿ			Ընդամենը /հազ. դրամ/
		2017թ.	2017թ.	2018թ.	
	2	3	4	5	6
	<<Ապաթեոզ>> ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրեր	58 873	19 205	8 005	86 083
	այդ թվում՝ որոշ սարքեր				
.1	Թվային տեսախցիկ /Ռեդ Ուան Բոդի/	5 720			5 720
.2	Կինոխցիկ /Արրի Ալեքսա Էքս Թի Պլյուս, հավաքածու/	19 850	3 000		22 850
.3	Գեներատոր /FG Վիլսոն P88-Ե1, ավտոկցորդով/	8 700	3 400	700	12 800

2012-2017թթ.. ընթացքում ՊՈԱԿ-ը «Ապաթեոզ» ՍՊԸ-ի հետ կնքել է նկարահանման և լուսավորման տեխնիկայի վարձակալության պայմանագրեր **304,46 մլն դրամ** գումարի չափով՝ այդ թվում 2012թ-ին 54,47 մլն դրամ, 2013թ-ին 29,91 մլն դրամ, 2014թ-ին 30,81 մլն դրամ, 2015թ-ին 72,9 մլն դրամ, 2016թ-ին 68,497մլն դրամ և 2017թ-ին 47,87 մլն դրամի չափով /**Հավելված 5**/, այդ թվում վերը նշված սարքերի վարձակալության համար նախատեսվել է՝ մասնավորապես.

- թվային տեսախցիկ՝ **Ռեդ Ուան Բոդի** 51,61 մլն դրամ,
- կինոխցիկ՝ **Արրի Ալեքսա Էքս Թի Պլյուս հավաքածու** 86,25 մլն դրամ,
- գեներատոր՝ **FG Վիլսոն P88-Ե1** 35,8 մլն դրամ:

Ուսումնասիրելով վերը նշված սարքերի վերաբերյալ «Ապաթեոզ»>

ՍՊ ընկերության կողմից 2011-2019թթ. ընթացքում ՀՀ ներմուծված ապրանքների վերաբերյալ ՊԵԿ-ի կողմից 18.12.2019թ. թիվ 6-1/79215-2019 գրությամբ տրամադրված տեղեկատվությունը պետք է նշել, որ կինոխցիկ՝ **Արրի Ալեքսա Էքս Թի Պլյուս հավաքածուն** ՀՀ է ներմուծվել 09.10.2013թ-ին 58,81մլն դրամ ընդհանուր արժեքով /Աղյուսակ 4/, իսկ մյուս սարքավորումների հիմնական մասը ՀՀ են ներմուծվել կամ ձեռք են բերվել ՀՀ տարածքում 2011թ.-ից ավելի վաղ:

«Ապաթեոզ»> ՍՊ ընկերության հետ 2012-2017թթ.. ընթացքում կնքված պայմանագրերում նշված սարքավորումների մեկ օրվա վարձակալության վճարները սահմանվել են.

- թվային տեսախցիկ՝ **Ռեդ Ուան Բոդի**՝ 1 օրը 130 հազ դրամ, իսկ վարձակալված օրերի քանակը կազմել է շուրջ **397 օր** /տարեկան միջինը 67օր/,

- կինոխցիկ՝ **Արրի Ալեքսա Էքս Թի Պլյուս** հավաքածու՝ 2012-2016թթ.. ընթացքում 1 օրը 400 հազ. դրամ և 17թ.ին 1 օրը 250 հազ. դրամ, իսկ վարձակալված օրերի քանակը կազմում է շուրջ **237 օր** /տարեկան միջինը 40օր/,

- գեներատոր՝ **FG Վիլսոն P88-Ե1** /ավտոկց./՝ 1 օրը 100 հազ դրամ, իսկ վարձակալված օրերի քանակը կազմում է շուրջ 358 օր /տարեկան միջինը 60օր/:

"Ապաթեոզ" ՍՊԸ-ի /ՀՎՀՀ՝ 02580432/ կողմից 09.10.2013թ ընթացքում ՀՀ ներմուծված որոշ ապրանքների վերաբերյալ								
ԱՏԳ ԱԱ կոդ	Ձևակերպման ն ամսաթիվ	Ապրանքի նկարագիր	Նե տ. քաշ /կգ/	Չ/Մ	Քն .	Մաքսային արժեք	ԱԱՀ	ՀՀ դրամ Մաքսատուրք
1	2	3	4	5	6	7	8	9
85258030	09.10.2013	Տեսախցիկ ARRI ALEXA XT PLUS	0.7	հատ	1	37,802,902	8,316,638	3,780,290
85299020	09.10.2013	Տեսախցիկի մասեր	5	կգ	5	2,346,635	469,327	-
90079100	09.10.2013	Կինոապարատի մասեր	9.1	կգ	19. 1	4,528,740	905,748	-
42021990	09.10.2013	Քեյս՝ տեսախցիկի համար	1	հատ	1	501,063	110,233	50,106
Ընդամենը						45,179,340	9,801,946	3,830,396
Ընդամենը ամբողջը /հավաքածու/								58,811,682

Ելնելով վերոգրյալից կարելի է փաստել, որ օրինակ Կինոկենտրոնը միայն կինոխցիկ՝ **Արրի Ալեքսա Էքս Թի Պլյուս** հավաքածուի վարձակալության համար կնքել և վճարել է /ըստ ներկայացված առկա տեղեկատվության/ շուրջ 86,2 մլն դրամ, այն դեպքում, երբ «Ապաթեոզ» ՍՊ ընկերությունը կինոխցիկի հավաքածուն Հայաստանի Հանրապետություն է ներկրել 58,8 մլն դրամ արժեքով /ներառյալ ԱԱՀ/:

Հետևաբար «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից նշված ժամանակաշրջանում սարքավորման /սարքավորումների/ գնման գործընթաց կազմակերպելու պարագայում գնված սարքը /սարքերը/ **կարող էր** հանդիսանալ պետական սեփականություն՝ ներառվելով ՊՈԱԿ-ի հաշվեկշռում, իսկ վերջիններիս ձեռք բերման գինը կձևավորվեր իրականացված մրցույթի /մրցույթների/ արդյունքում:

Պետք է փաստել, որ «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2017-2018թթ.. ընթացքում սարքավորումների վարձակալության պայմանագրեր են կնքվել /մատուցվել են ծառայություններ/ 65,05 մլն դրամի չափով, որից հիմնական մասը կնքվել է 31.07.2017թ. դրությամբ /Աղյուսակ 2/, մասնավորապես.

- 01.01.17-31.07.17թթ. **59,29** մլն դրամ /**58,87** մլն դրամը «Ապաթեոզ» ՍՊԸ և 400 հազ. դրամ այլ անձ/, իսկ 31.07.17-31.12.17թթ. **4,08** մլն դրամ /այլ անձեր/,
- 2018թ.-ի ընթացքում կնքվել **1,67** մլն դրամի չափով /այլ անձեր/:

31.07.2017թ.-ից հետո «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կնքված նկարահանման և լուսավորման տեխնիկայի վարձակալության պայմանագրերի չափը /**59,29** մլն դրամ/ շեշտակի նվազել է /2018թ.-ի ողջ ընթացքում կազմելով **1,67** մլն դրամ, իսկ 2017թ.-ի 2-րդ կեսին **4,08** մլն դրամ/, այն դեպքում, երբ ՊՈԱԿ-ը շարունակել է աջակցել ֆիլմ արտադրության գործընթացներին:

Ինչ վերաբերում է «Ապաթեոզ» ՍՊԸ-ի կողմից 2017թ.-ի ընթացքում 58,87 մլն դրամի չափով մատուցված ծառայություններին, պետք է նշել, որ ըստ ներկայացված տեղեկատվության 11,0 մլն դրամի չափով ծառայությունները մատուցվել են համաձայն 2016թ.-ին կնքված պայմանագրի:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Ապաթեոզ» ՍՊԸ-ի կողմից 11,0 մլն դրամի ծառայությունների մատուցման վերաբերյալ Հանձնման-Ընդունման արձանագրությունը կազմվել և հաստատվել է 13.02.2017թ.-ին՝ հիմք ընդունելով 2016թ.-ին կնքված թիվ ՀԱԿԲԾՁԲ 16/04/1 պայմանագիրը, իսկ Հաշիվ ապրանքագիրը՝ /Բ 3146288553/ «Ապաթեոզ» ՍՊԸ-ի կողմից դուրս է գրվել 03.03.2017թ.-ին:

2016թ.-ի թիվ ՀԱԿԲԾՁԲ 16/04/1 պայմանագիրը կնքվել է 27.05.16թ.-ին 58,36 մլն դրամի չափով և ծառայությունների մատուցման ավարտ է սահմանվել **31.12.16թ.**-ը:

Ըստ ՊՈԱԿ-ի /ինչպես նաև ՊԵԿ-ի/ կողմից ներկայացված տեղեկատվության 2016թ.-ի ընթացքում «Ապաթեոզ» ՍՊԸ-ի կողմից թիվ ՀԱԿԲԾՁԲ 16/04/1 պայմանագրի շրջանակում փաստացի մատուցվել է 40,81 մլն դրամի ծառայություններ:

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատին 17.12.2019թ.-ի դրությամբ չի ներկայացվել 2016թ. կնքված թիվ ՀԱԿԲԾՁԲ 16/04/1 պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետների երկարացման

վերաբերյալ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համաձայնագրի վերաբերյալ տեղեկատվությունը:

Պետք է նշել որ համաձայն ՀՀ Կառավարություն 10.02.2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի 4-րդ ենթակետի /տվյալ պահին գործող/.

«...Արգելվում է պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ժամկետը մեկ անգամից ավելի մինչև **30 օրացուցային օրից** ավելի ժամկետով երկարաձգելը: Ընդ որում, ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամկետը կարող է **երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը** պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը...»:

Ելնելով վերոգրյալից 2016թ. կնքված թիվ ՀԱԿԲԸԾՁԲ 16/04/1 պայմանագրի ժամկետների երկարացման վերաբերյալ Համաձայնագրի առկայության պարագայում /որը չի ներկայացվել/ «Ապաթեոզ» ՍՊԸ-ի կողմից 11,0 մլն դրամի ծառայությունների մատուցման վերջնաժամկետը առավելագույնը կարող էր սահմանված լինել 31.01.2017թ.-ը մինչդեռ ծառայությունների մատուցման /11,0 մլն դրամ/ Հանձնման-Ընդունման արձանագրությունը կազմվել է 13.02.2017թ.ին:

- 2016 թվականի հունվարի 29-ի 126-Ա կառավարության որոշմամբ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ **Երևան քաղաքի Տերյան 2 հասցեում գտնվող 98,633.0 հազ. դրամ գնահատված արժեքով 198,6 քմ ընդհանուր մակերեսով շենքը և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0,0195 հա հողատարածքը** հետ է վերցվել «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ից և որպես կանոնադրական կապիտալում ներդրում գնահատված արժեքով ներդրվել է «Հայաստանի հանրային

ռադիոընկերություն» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում՝ լրացուցիչ բաժնեմասեր տեղափոխելու միջոցով դրա գնահատված արժեքի չափով ավելացնելով ընկերության կանոնադրական կապիտալը: **Կինոկենտրոնին պատկանող շենքը տրվել է Հանրային ռադիոընկերությանը, մեկ ամիս հետո տեղի է ունեցել գույքի հանձնում-ընդունումը, ևս մեկ ամիս անց հեռուստառադիոընկերության խորհուրդը աճուրդի է հանել այս երկու շինությունները (ընդամենը՝ 1365.6 քմ) 1167 քմ Հանրային ռադիոյի ստուդիայի շենքը և 198,6 քմ Հայֆիլմ կինոդերասանի ստուդիան:**

- Կինոկենտրոնն այժմ տարածք է վարձակալում «Հայֆիլմ» ստուդիայի՝ Աշտարակի խճուղում գտնվող շենքում: Կինոկենտրոնին պատկանող Տերյան Յա հասցեի տարածքը վերանորոգման կարիք ունի: 2007թ-ին իրականացվել են այս տարածքի նախագծային-նախահաշվային աշխատանքները և պարզ է դարձել, որ դրա վերանորոգումը կարժենա 31 մլն դրամ: Ուշագրավ է այս փաստը, որ 2006-2018թթ. Ազգային կինոկենտրոնի համար պետբյուջեից վարձակալության նպատակով տրված ընդհանուր գումարը կազմել է մոտ 113,837.1 հազ. դրամ:

Կինոկենտրոնի թվով 14 աշխատակիցներ, որոնք աշխատում են առանց համատեղությամբ, ըստ Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության, աշխատել են նաև այլ ընկերություններում: Անհասկանալի է դառնում նրանց աշխատանքի ամբողջականությունը և պայմանագրով իրենց պարտավորությունների կատարումը մի քանի ընկերություններում միաժամանակ:

Առաջարկություններ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝

- Կինոկենտրոնի կառավարումը համապատասխանեցնել կանոնադրությամբ սահմանված կառավարման ձևին;
- Ներդնել մեխանիզմներ, որոնք հնարավորություն կընձեռնեն հսկել պետության մասնակցությամբ ֆիլմերի ցուցադրումը և արդյունքում եկամուտների ստացումը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ին՝

- Պայմանագրերում հստակեցնել Կինոկենտրոնի իրավասությունները՝ ընդգրկելով պրոդյուսերական ընկերությունների ներդրումների նկատմամբ վերահսկողական գործառույթները, հաշվետվողականությունը;
- «Ապրանքների հանձնման-ընդունման» ակտերում նշել ապրանքի (ֆիլմի) արտադրության համար կատարված փաստացի ծախսերի հանրագումարը, որի արդյունքում հնարավոր կլինի հաշվարկել ՀՀ պետական բյուջեից կատարված ներդրման փաստացի փայաբաժինը, իսկ ֆիլմի ցուցադրումից՝ նաև ակնկալվող եկամուտները;
- Հետևողական լինել պայմանագրի անբաժանելի մաս կազմող փաստաթղթերի փաստացի կազմմանը (տվյալ դեպքում՝ ֆինանսավորման գրաֆիկներ և այլն):
- Պայմանագրերի համապատասխան կետերով դադարեցնել կինոարտադրության ֆինանսավորումները՝ ֆիլմարտադրողների կողմից ներդրումների փաստը հավաստող փաստաթղթերի բացակայության դեպքում (հաշվետվություններ):
- Կազմել կամ ընդունել ֆիլմերի իրատեսական նախահաշիվներ, որոնք կբացառեն նախահաշվային էական շեղումները և կբարձրացնեն գումարների ծախսման արդյունավետությունը

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հաշվեքննության օբյեկտի ղեկավարը, ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվեքննիչ պալատին տրամադրում է ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 1 ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

Պարզաբանում Կինոկենտրոնի կառավարման անհամապատասխանության վերաբերյալ 14.07.2017թ.-ին կանոնադրության 5-րդ բաժնի (կազմակերպության կառավարում) դրույթներից բխող իրավասությունները պետք է իրականացվեն Լիազոր պետական մարմինի կողմից: Կինոկենտրոնը իր կառավարումը իրականացրել է համաձայն կանոնադրության 39 կետի:

Պարզաբանում «Անխելք մարդը» կամ «Լյուդվիգ անունով ռզնի» ֆիլմի վերաբերյալ

1.02.05.2017թ կնքված նախահաշվով տեխնիկայի վարձակալության գումարը հաստատվել է 21000,0 հազ. դրամ, ինչի նպատակով էլ գնանշման հարցման ընթացակարգով կնքվել է պայմանագիր <<Ապաթեոզ>> ՍՊԸ-ի հետ: 2017թ նոյեմբերին ճշտված նախահաշվով ավելացել է նկարահանման օրերի թիվը և տեխնիկայի վարձակալության գումարը ավելացել է 9000,0 հազ. դրամով: Քանի որ արտադրության իրականացման համար գումարը փոխանցվել է <<Սինեպրո>> ՍՊԸ պրոդյուսերական ընկերությանը, ընկերությունը լրացուցիչ առանձին պայմանագիր է կնքել <<Ապաթեոզ>> ՍՊԸ-ի հետ: Քանի որ պրոդյուսերական ընկերությունը ՀՀ գնումների մասին օրենքի համաձայն որպես պատվիրատու չի կարող հանդես գալ, հետևաբար գնումների ընթացակարգ չէր կարող իրականացնել:

Պարզաբանում 2.

Ֆիլմում նկարահանված Ռենջ-ռովեր մականիշի ավտոմեքենայի վերաբերյալ:

Կինոարտադրության առանձնահատկություններից ելնելով արտադրության ընթացքում նկարահանվում է ավելի շատ տևողությամբ նյութ, քան պետք է լինի ֆիլմի վերջնական տևողությունը: Նկարահանումներից հետո ռեժիսորը սկսում է ֆիլմի մոնտաժումը, որը ստեղծագործական պրոցես է և դա ռեժիսորի հեղինակային իրավունքն է, թե որ հատվածը օգտագործել ֆիլմում: Մոնտաժի արդյունքում շատ դրվագներ, և նյութեր դուրս են մնում հիմնական ֆիլմից և չեն պահպանվում: Այս ֆիլմում Ռենջ-ռովեր մեքենան նկարահանվել է, և մենք ունեն աշխատանքային տարբերակով պատահմամբ պահպանված 1 պլան, որում ակնհայտ երևում է այդ մեքենան:

Կից ներկայանում ենք նյութը:

Պարզաբանում «Վերադարձողները» փաստավավերագրական ֆիլմի վերաբերյալ Ֆիլմի հիմնական գաղափարից չլքելով ֆիլմը համալրվել է նոր հերոսներով, ովքեր ունեն նույն ճակատագիրը և համոզվել են հայրենիքի կարևորության հարցում, հավատում են ապագային, դեռ հույս և մեծ ցանկություն ունեն Հայաստան վերադառնալու: Ռեժիսորի կարծիքով շատ կարևոր էր ամեն մեկի պատմությունը և ասելիքը, որը կստիպեր հանդիսատեսին մտածել այդ խնդրի շուրջ և անհանգստանալ:

Պարզաբանում «Սպիտակ» ֆիլմի գումարների ծախսման վերաբերյալ

Ժամանակահատվածը չի առնչվում իմ պաշտոնավարման ժամանակահատվածի հետ:

Պարզաբանում «Ոչ թեթև ուշագնացություն» ֆիլմի վերաբերյալ

Ժամանակահատվածը չի առնչվում իմ պաշտոնավարման ժամանակահատվածի հետ:

Պարզաբանում «Գնեմ վաճառեմ»(ռեժ.՝ Գ. Թադևոսյան)

Ժամանակահատվածը չի առնչվում իմ պաշտոնավարման ժամանակահատվածի հետ:

Պարզաբանում «Նրա մասին» ֆիլմի հետ կապված

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով»: պետական գումարների ծախսման վերաբերյալ բացատրությունը ներկայացվել է Ձեզ:

Պարզաբանում «Ճանապարհ» ֆիլմաշարի վերաբերյալ

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով»: պետական գումարների ծախսման վերաբերյալ բացատրությունը ներկայացվել է Ձեզ:

Պարզաբանում «Տատիկիս վարսերը» ֆիլմի վերաբերյալ

«Տատիկիս վարսերը» ֆիլմին վերաբերվող նյութերով հարուցվել է թիվ 10101319 քրեական գործը:

Պարզաբանում «Սև այգի, կապույտ երկինք» ֆիլմի վերաբերյալ

Կինոկենտրոնի կողմից «Անէվա պրոդակշն» ՍՊ ընկերությանը գումարը փոխանցվել է առաջին անգամ՝ 07.11.2018թ.-ին՝ 15,000.0 հազ. Դրամ , այսինքն 06,11,2019թ Սուբսիդիայի պայմանագրի կնքելուց հետո: /Վճարման հանձնարարագիրը Ձեզ ներկայացվել է/ կից կներկայացնենք կրկին:

<< Սև այգի կապույտ երկինք>> ֆիլմի հյուրանոցային ծառայությունները մատուցվել են ԼՂՀ-ում և Էլեկտրոնային հաշիվների դուրս գրման համակարգով հարկային հաշիվներ դուրս գրվել չէր կարող: Քանի որ ԼՂՀ-ի համար Հայաստանի Հանրապետությունը համարվում է ոչ ռեզիդենտ:

. Կինոկենտրոնի և «Անէվա պրոդակշն» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ապրանքների հանձնման-ընդունման ակտ», համաձայն որի պրոդյուսերի կողմից հանձնվել, իսկ Կինոկենտրոնի կողմից ընդունվել է «Սև այգի, կապույտ երկինք» ֆիլմը՝ DVD տեսասկավառակով:

Ֆիլմը որպես ապրանք չի հանձնվում Կինոկենտրոնին, որպես ակտիվ չի հաշվառվում կինոկենտրոնի հաշվեկշռում իր իրական արժեքով : Հանձնման-ընդունման ակտը միայն իրենից ենթադրում է բովանդակային հաշվետվություն ֆիլմի ավարտի վերաբերյալ: Իսկ փաստացի կատարված ներդրումների և ծախսումների վերաբերյալ առանձին ներկայացվում է տեղեկատվություն:

Հարկ է նշել, որ «Եվրոմաժ» հիմնադրամին անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը այլ ոչ թե Կինոկենտրոնը: «Եվրոմաժ» հիմնադրամին դիմել է ֆրանսիական կինոարտադրող կողմը և օգնությունը ստացել է ֆրանսիական կողմը: Պարզապես «Անէվա պրոդակշն» ՍՊ ընկերության՝ 40.440 եվրո (20.22%) գումարը նախատեսվել է ծախսել Հայաստանում, որովհետև նկարահանումները պետք է իրականացվեին հայաստանում,ի դեմս Անէվ պրոդակշն ՍՊԸ-ի: Նշենք նաև, որ մինչ օրս Ֆրանսիական կողմը դեռևս «Եվրոմաժ» հիմնադրամից հասանելիք գումարը չի ստացել, համաձայն «Եվրոմաժ» հիմնադրամի ֆինանսավորման պայմանների:Իսկ ինչ վերաբերվում է Հայաստանի անդամակցությանը, դա մեծ հնարավորություն է տալիս հայ կինոարտադրողին լրացուցիչ ֆինանսավորում ստանալու և այդ գումարները հայաստանում ծախսելու համար:

Պարզաբանումներ «Սուսերով պար» ֆիլմի վերաբերյալ

Պայմանագրի 1.6 կետով սահմանվել է ֆիլմի ընդհանուր բյուջեն՝ 522,584.24 հազ. Դրամ է, որից 1.7 կետով՝ Կինոկենտրոնի ներդրման չափը նախատեսվել է 97.800.0 հազ. դրամ: <<Սուսերով պար>> ֆիլմի Պայմանագրի կողմեր են հանդիսանում <<Դի Էմ Էյչ ստուդիա>> ՍՊԸ և <<Հայաստանի ազգային կինոկենտրոն>> ՊՈԱԿ-ը:

Պայմանագրի 1. 7 կետի ներդրումը Կինոկենտրոնին է, իսկ մնացած մասը՝ 1. 6-1. 7 / <<Դի Էմ Էյչ ստուդիա>> ՍՊԸ-ին:

05.05.2018թ.Կինոկենտրոնի և «ԴիԷմԷյչ Ստուդիո»ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի համաձայն Դի Էմ Էյչ ստուդիո ՍՊԸ-ին են պատկանում ֆիլմի նկատմամբ օգտագործման բացառիկ իրավունքը և հեղինակային բոլոր իրավունքները,քանի որ ընկերությունը հանդես

է գալիս որպէս պրոդյուսերական կողմ:Իսկ «Մարս Մեդիա Ինտերթէյմոդ» պրոդյուսերական ընկերության և «ԴիԷմԷյՋ Ստուդիո»ՍՊ ընկերության միջև կնքված պայմանագրի համաձայն ռուսական ընկերությանն է վերապահվել ֆիլմի նկատմամբ օգտագործման բացառիկ իրավունքը և հեղինակային բոլոր իրավունքները, քանի որ նա արտադրողն է:

Պարզաբանում «Սողանք» ֆիլմի հետ կապված

«Սողանք» ֆիլմի հետարտադրական աշխատանքների կատարման համար 2018 թվականի դեկտեմբերին հատկացվել է 7000,0 հազ. դրամ, որի Ավարտը սահմանվել է 2019 թվականին: Համաձայն պայմանագրի Աշխատանքները իրականացվել են և գումարները ծախսվել են 2019թվականի ընթացքում: Ձեր կողմից ստուգվող ժամանակահատվածում հնարավոր չէր արձանագրել, որ ֆիլմի աշխատանքները որոշակի պատճառներով չի կատարվել:

Պարզաբանում՝ Պրոդյուսերական ընկերությունների որպէս գնորդ՝ հարկային հաշիվ ստացած գումարների վերաբերյալ :

Կինոարտադրության մեջ առավել գերակշռող ծախսերը կազմում են աշխատավարձերը, հոնորարները և գործուղման ծախսերը, որոնց վերաբերյալ որպէս գնորդ՝ հարկային հաշիվ ստացած գումարների վերաբերյալ տեղեկատվություն չի կարող լինել:

Պարզաբանում

2017թ.Կաննի կինոփառատոնի համար կատարված ծախսերը չեն առնչվում իմ պաշտոնավարման ժամանակահատվածի հետ:/պաշտոնավարման սկիզբը 25 հուլիսի 2017թ/

Պարզաբանում

Գուժ Թադևոսյանի առ հաշիվ ստացված գումարների վերաբերյալ

Գուժ Թադևոսյանի առ հաշիվ գումարների ստացման ժամանակահատվածը չի առնչվում իմ պաշտոնավարման ժամանակահատվածի հետ:

Նշեմ որ պաշտոնը ստանձնելուց հետո ինքս ընթացքում պարզել եմ , որ առհաշիվ գումարը ետ չի վերադարձվել, ինչին էլ ընթացք եմ տվել և գումարը հետ պահանջել:Գումարը ամբողջությամբ հետ մուտք է արվել Կազմակերպության դրամարկո:

Պարզաբանում խաղարկային կինոնկարների վերաբերյալ կնքված պայմանագրային կետերի կատարման մասով

Հարկ եմ համարում նշել, որ <<Անխելք մարդը>>,<<Վերադարձողները>>,<<Սպիտակ>>,<<Ոչ թեթև ուշագնացություն>>,<<Նրա Մասին>>,<<Տատիկիս վարսերը>>,<<Ճանապարհ>>,<<Չյունանուշ>>,<<Գնեմ վաճառեմ>> ֆիլմերի վերաբերյալ պայմանագրերը կնքվել են մինչ իմ պաշտոնավարման ժամանակահատվածը, և այդ ժամանակահատվածի համար պարզաբանումներ չեմ կարող տալ:

«Կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների այլ կազմակերպություններում աշխատելու վերաբերյալ

ցանկում նշված անձանց համար ,բացի Սուսաննա Հարությունյանից, կինոկենտրոնը համարվում է հիմնական աշխատավայր,իսկ աշխատանքից դուրս նրանց զբաղվածությունը վերահսկելու անհրաժեշտություն չի եղել:Սուսաննա Հարությունյանը Կինոկենտրոնում աշխատում է համատեղությամբ:

Այս պահին Անահիտ Հարությունյանը,Աննա խաչատրյանը,Արթուր Կոստանդյանը,Գուժ Թադևոսյանը, Հարություն Հուրիխանյանը և Մարիա Միրզոյան այլևս մեր աշխատակիցները չեն:

Կից ներկայացնում ենք այլ գործատուների մոտ մեր աշխատակիցների կողմից ներկայացված պայմանագրերը Ձեր ներկայացրած ժամանակահատվածի համապատասխան:

Պարզաբանում ֆիլմերի ցուցադրության վերաբերյալ

Ցանկացած նոր արտադրված ֆիլմի պրոդյուսեր փորձում է առաջնահերթ ֆիլմը ներկայացնել Ա կլասի փառատոներում և հետո նոր մնացած միջազգային փառատոներում: ցանկացած Ա կլասի փառատոնի որևէ մրցութային ծրագրում մասնակցած ֆիլմերի հանդեպ հետաքրքրությունը դիստրիբուտորների/տարածողների/ կողմից մեծանում է և մեծ հնարավորություններ են ստեղծվում ֆիլմը վաճառելու համար: Դրա համար նոր արտադրված ֆիլմերը մինչև 2 տարվա ընթացքում փորձում են ներկայացնել կինոփառատոներին, որից հետո միայն կազմակերպում են կոմերցիոն ցուցադրություններ:

Փառատոններում ցուցադրությունները ոչ կոմերցիոն են:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՈՐՈՇՈՒՄ

«28» փետրվարի 2020 թվականի N 23-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հաշվեքննիչ պալատի մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ
պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարության «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի
ֆինանսատնտեսական գործունեության հաշվեքննության արդյունքների վերաբերյալ
ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

 Լ. ԶՈԼՅԱՆ

հավելված 1

08.02.2017թ. Կնքված 293,518.7 հազ. դրամի Սուբսիդիայի պայմանագրով նվարտահանված ֆինանս

	Կրտսերության ժամկետ	Տեսակը	Ընդհանուր բյուջե	Ներդրումներ		Ծառացի ֆինանսավորում		Ներդրման չափը %		Կիճակը	Ֆինանսավորող ընկերության անվանումը
				պրոդյուսերական և ընկերության կողմից	կրիտիկներու կողմից	2016	2017	պրոդյուսերական ընկերություն	կրիտիկներու		
1. Խաղարկային ֆինանս											
„Նրա մայրն,, ռեժ. Ա. Ազատյան	30.03.2016-12.03.2019	խաղարկային 85րոպե	220,000.0	190,000.0	30,000.0	10,000.0	20,000.0	86.4	13.6	ավարտվ.	<<Այսօր Պրոս>> ֆինանսավորություն ՍԿԿ
„Ոչ թե՛ թև, ոչ զավակություն,, ռեժ. Ս. Զոհրն	2016-2017	խաղարկային 90 րոպե	214,000.0	193,000.0	21,000.0	6,000.0	15,000.0	90.2	9.8	ավարտվ.	<<Թիմ Պրոդակշն >> ՍՊԸ, Հայաստանի ազգային կրիտիկներու
<<Վերադարձողները>> ռեժ. Հ. Խաչատրյան	2016-2017	փաստական-վերագրական և- 50 րոպե	78,600.0	23,600.0	55,000.0	15,000.0	40,000.0	30.0	70.0	ավարտվ.	<< Ոսկե Երան>> ԿԶԴ
<<Տատիկիս վարունը>> ռեժ. Մ. Զաքարյան	2016-2017	խաղարկային և 100-րոպե	312,000.0	289,000.0	23,000.0	8,000.0	5557.0 9443.0	92.6	7.4	ավարտվ.	<< Պրոդակշն ֆիլմ Պրոդակշն>> ՍՊԸ, Հայաստանի ազգային կրիտիկներու ՊՈԱԿ
„Ինքնություն,, ռեժ. Մ. Սահակյան	2016-2017	խաղարկային և	186,640.0	179,640.0	7,000.0	4,000.0	3,000.0	96.2	3.8		<< Անուկ ֆիլմ>> ՍՊԸ
„Ձյունանուշ,, ռեժ. Ա. Սիրոնյան	02.05.2017-30.11.2018	խաղարկային և 70-րոպե	75,158.0	33,615.0	41,543.0		16,543.0	44.7	55.3	ավարտվ.	Արմեն Օսիկի Սիրոնյան <<Հայաստ>> ՍՊԸ,
Ծանապարհ՝ Սարգ. Ավերդը ռեժ.Է.Բաղդասարյան	01.04.2016-01.11.2018	խաղարկային և-120	115,000.0	60,000.0	55,000.0	15,000.0	25,000.0	52.2	47.8	ավարտվ.	<< Էդգար Բաղդասարյան ֆիլմ պրոդակշն> ՍՊԸ

„Սպիտակ“, ռեժ.Ա. Կոտոտ	21.11.2016- 18.09.2018	Խաղարկային և-25 րոպե	936,920.0	886,920.0	50,000.0		25,000.0	94.7	5.3	ավարտվ.	Կրկին զարգացման իմնադրամ <<Տեխնո ֆիլմ>> ՄՊԸ /ՌԴ/
„Ալիսեյը մարդը“, ռեժ.Մ.Ավդոնյան	02.05.2017- 01.10.2018	Խաղարկային և-90 րոպե	168,000.0	68,000.0	100,000.0		62,657.0 21,000.0	40.5	59.5	ավարտվ.	<<Սինեպոլ>> ՄՊԸ, Հայաստանի ազգային կինոֆեստիվի ՊՈԱԿ
„Սուսերով պար“, ռեժ.Յ.Ռազվիկով	2018-2019	Խաղարկային և 90-րոպե	522,584.2	424,784.2	97,800.0			81.3	18.7	ընթացիկ	Դի Էմ Էլ Ստորդի>> ՄԴ
„Մարդը այգեճորհից, կամ „Ուղեք ինքով“, ռեժ.Ա. Հարությունյան	01.12.2017- 17.12.2018	սցենարակա և հայտի զարգացում	1,000.0	0.0	1,000.0		1,000.0	0.0	100.0	ավարտվ.	<< Աշոտ Ղազարյան>> Ֆիլմի իրանի, և խոսքի դպրոց ստորդիա>>
„Իմ կինոն“, ռեժ.Հ. Վարդանյան	05.11.2017- 04.12.2017	սցենարակա և հայտի զարգացում	1,000.0	0.0	1,000.0		1,000.0	0.0	100.0	ավարտվ.	<<Բարիկյան Արտ Վիտե>> ՄՊԸ
<<Լամպը>> դեբյուտ	15.02.2017 30.06.2017	դեբյուտային	1,000.0	0.0	1,000.0		1,000.0	0.0	100.0	ավարտվ.	Հայաստանի ազգային կինոֆեստիվի ՊՈԱԿ
<<Ծահճուտ>>դեբյուտ	02.05.2017- 31.05.2017	դեբյուտային	2,000.0	0.0	2,000.0		2,000.0	0.0	100.0	ավարտվ.	Հայաստանի ազգային կինոֆեստիվի ՊՈԱԿ
<<Միմի>>դեբյուտ	02.05.2017- 31.05.2017	դեբյուտային	1,440.0	840.0	600.0		600.0	58.3	41.7	ավարտվ.	Արսեն Ասլանյան Վարդենի ԱՋ
„Աղբիկն ու մահը“, ռեժ. Ունիդատյան	01.06.2017- 31.07.2017	Խաղարկային և 15-րոպե	7,718.7	0.0	7,718.7		7,718.7	0.0	100.0	ավարտվ.	Հայաստանի ազգային կինոֆեստիվի ՊՈԱԿ
„Տեր ողորմյա“, ռեժ. Լ.Մոկիսյան	01.06.2017- 30.06.2017	Խաղարկային և 7 րոպե	3,000.0	0.0	3,000.0		3,000.0	0.0	100.0	ավարտվ.	Հայաստանի ազգային կինոֆեստիվի ՊՈԱԿ
„Գնե՛մ, վաճառե՛մ“, ռեժ. Գ.Բաղդասյան	02.05.2017- 29.12.2017	Խաղարկային և 7 րոպե	23,365.0	14,365.0	9,000.0		9,000.0	61.5	38.5	ավարտվ.	Էլեգիա կինոընկերություն ՄՊԸ /ՌԴ/ , Հայաստանի ազգային կինոֆեստիվի ՊՈԱԿ
„Քարվաճառ“, ռեժ. Ա. Արար	03.07.2017- 31.07.2017	Խաղարկային և 10 րոպե	15,000.0	0.0	15,000.0		15,000.0	0.0	100.0	ավարտվ.	Հայաստանի ազգային կինոֆեստիվի ՊՈԱԿ
<<Կիրակի>>	02.10.2017- 31.10.2017	դեբյուտային	2,000.0	0.0	2,000.0		2,000.0	0.0	100.0	ավարտվ.	Հայաստանի ազգային կինոֆեստիվի ՊՈԱԿ

„Հայր ու տղա,, ռեժ. Ա. Վաթյան	02.10.2017-30.11.2017	խաղարկայի և 20-րդյն	8,000.0	0.0	8,000.0		8,000.0	0.0	100.0	ավարտվ.	Հայաստանի ազգային կրթիչները ՊՈԱԿ
Ընդամենը խաղ. ֆիլմեր.			2,894,425.9	2,363,764.2	530,661.7		293,518.7				

110,304.70

* 2017թ. Սուբսիդիայի պայմանագրով ֆինանսավորված 293,518.7 հազ. Դրամից 110,304.7 հազ. Դրամի աշխատանքների ծավալը իրացվել է Հայաստանի ազգային կրթիչները կողմից (շեղված թվերի հանրագումար)

հավելված 2

5.05.2018թ.վիճված 131.343.0 հազ. դրամի, 06.11.18թ.վիճված 119.597.0 հազ. դրամի և 05.12.2018թ. Վնքված 23.500.0 հազ.դրամի սուբսիդիայի պայմանագրեր

հազ. դրամ

	Ընդհանուր բյուջե	Ներդրումներ				2018		2018		Վիճակը	Ներդրման չափը %		Ֆինանսավորող ընկերության անվանումը
		պրոդյուսերական կողմից	կինոկենտրոն կողմից	Եվրոմաժ և երկրների լեդիթոլների կողմից	Նախատեսված ֆինանսական ֆինանսական	Փաստացի ֆինանսական	Սուբսիդիայի գումար, հաշվում 01.01.19թ.				Պրոդյուս. ընկեր.	կինոկենտրոն	
1.Լիանվորված ֆիլմերի զարգացում													
«Ամերիկացի երախտակիորենը»													<<Սան ֆիլմերու ստուդիո>> ՍՊԸ
1 ռեժ.Է.Բարդասարյան	15,865.0	13,365.0	2,500.0		2,500.0	2,250.0	250.0	ընթացի	84.2	15.8			
«Բանաստեղծը»													<<Սո Բեյ ֆիլմզ>> ՍՊԸ
2 ռեժ.Ռ.Քոչար	7,890.0	5,390.0	2,500.0		2,500.0	1,925.0	575.0	ընթացի	68.3	31.7			<<Այսո Պրոդ>>
«Համեմատ»													<<Ֆիլմ ստուդիո>> ՍՊԸ
3 ռեժ.Ա.Ազատյան	4,630.0	2,130.0	2,500.0		2,500.0	1,250.0	1,250.0	ընթացի	46.0	54.0			<<Ֆիլմ ստուդիո>> ՍՊԸ
«Պաղ ղը թրոս»													<<Ֆիլմ ստուդիո>> ՍՊԸ
4 ռեժ.Պ.Կարոյանյան	18,354.0	15,854.0	2,500.0		2,500.0	2,250.0	250.0	ընթացի	86.4	13.6			<<Ֆիլմ ստուդիո>> ՍՊԸ
«Փրիսանկում»													<<Ֆիլմ ստուդիո>> ՍՊԸ
5 ռեժ.Ս.Ռոստյան	3,220.0	720.0	2,500.0		2,500.0	2,250.0	250.0	ընթացի	22.4	77.6			<<Ֆիլմ ստուդիո>> ՍՊԸ
2.Լիանվորված ֆիլմերի													
«Ավելով երևանը»													<<Սարգիս Երևան>> ՍՊԸ
1 ռեժ.Ն.Հակոբյան	67,478.5	57,478.5	10,000.0		10,000.0	0.0	10,000.0	ընթացի	85.2	14.8			<<Ֆիլմ ստուդիո>> ՍՊԸ
«Դրամա»													<<Ֆիլմ ստուդիո>> ՍՊԸ
2 ռեժ.Ս.Ազատյան	283,430.0	273,430.0	10,000.0		10,000.0	6,770.0	3,230.0	ընթացի	96.5	3.5			<<Ֆիլմ ստուդիո>> ՍՊԸ
«Երգողները»													<<Ֆիլմ ստուդիո>> ՍՊԸ
3 ռեժ.Ա. Մալաքյան	34,397.0	22,300.0	12,097.0		12,097.0	4,700.0	7,397.0	ընթացի	64.8	35.2			<<Ֆիլմ ստուդիո>> ՍՊԸ

[illegible]

«Ջեյի»- ուժ. Ա. 1 Շահագրքան	16,500.0	0.0	16,500.0	16,500.0	0.0	16,500.0	ընթացիկ	0.0	100.0	<<Իրավունքի Պրոյեկտ>> ՄԴԸ
«Արդյուն»- ուժ. Մ. 2 Դոկլարյան	8,800.0	1,800.0	7,000.0	7,000.0	0.0	7,000.0	ընթացիկ	20.5	79.5	<<Ֆրանսիական Աշակերտական հիմնադրամ>>
Ընդամենը խաղ. ֆուտ	3,592,647.5	2,402,775.5	487,440.0	604,632.0	274,440.0	211,878.0	62,562.0			

հավելված 3

աշխատություններում արձանագրված ֆինանսական հոսքերի, ֆինանսավորման, կատարված ծախսերի և ոչ ակադեմիկական ներդրումների մասին

	Ֆինանսական աղբյուրներ	Ներդրումներ			2016	2017	2018	Ներդրման չափը		Ֆինանսավորող ընկերության անվանումը	Փաստաթղթերով հիմնավորված ծախս ընդամենը	Եզրույթ (ԵԱԿ)	Ոչ ակադեմիկական ներդրում
		պարտավորումներ	կրթական ոլորտի կողմից	Համաձայնագրերի կողմից				%	կրթական ոլորտի կողմից				
„Նրա մասին“, ռեժ. Ա. Լեզարյան	220,000.0	190,000.0	30,000.0		10,000.0	20,000.0		86.4	13.6	„Այսօր Պրոս“, ֆինանսավորող. Ս/Կ	20,000.0		190,000.0
„Ոչ բնական ուժերի ուժգնություն“, ռեժ. Մ. Զորին	214,000.0	193,000.0	21,000.0		6,000.0	15,000.0		90.2	9.8	„Թիմ“ Պրոդյուսինգ ՍՊԸ, Հասարակական	15,000.0		193,000.0
„Տարիներ վաղեմ“, ռեժ. Մ. Զորյան	312,000.0	289,000.0	23,000.0		8,000.0	15,000.0		92.6	7.4	„Պարավել Ֆիլմ Պրոդյուսինգ ՍՊԸ, Կրթականություն ՊՈԱԿ	15,000.0		289,000.0
„Վերադարձը ինձ“, ռեժ. Հ. Բաղդասարյան	78,600.0	23,600.0	55,000.0		15,000.0	40,000.0		30.0	70.0	„Ռաբե Տիման“, ԿԶՀ	40,000.0		23,600.0
Կապույտ երկինք կամ Տերիտորիա»-90րդ ռեժ. Ն. Մարտիրոսյան	708,000.0	60,368.0	43,000.0	604,632.0			43,000.0	14.6	6.1	„Ամեկ Պրոդյուսինգ ՍՊԸ	43,000.0	200,000	665,000.0
„Զուլանուշ“, ռեժ. Ա. Մոնյան	75,158.0	33,615.0	41,543.0			16,543.0	25,000.0	44.7	55.3	Արմեն Օսիկի Մոնյան ՍՊԸ, Հայաստան, ՍՊԸ	41,543.0		33,615.0

Խաղ, դրամ

Ճանապարհի՝ Սարգ, Ավերորդ ռեժ. Է. Բարդաս արյան	115,000.0	60,000.0	55,000.0		15,000.0	25,000.0	15,000.0	52.2	47.8	Բարդասարյան ֆիլմ արդյունք, ՄԴԸ	40,000.0		60,000.0
„Սպիտակ,“ ռեժ. Ա. Կոտոտ	936,920.0	886,920.0	50,000.0			25,000.0	25,000.0	94.7	5.3	Կիսի գարգազան հիմնարդամ „Տեղստո ֆիլմ, ՄԴԸ /ՈՂ/	50,000.0	250 000	886,920.0
„Արիւնք մարդը,“ ռեժ. Մ. Մկրտչյան	168,000.0	68,000.0	100,000.0			83,657.0	16,343.0	40.5	59.5	„Սինեպոլ,“ ՄԴԸ, Հայաստանի ազգային	100,000.0		68,000.0
„Սոււերով պար,“ ռեժ. Յ. Ուզգիրով	508,984.2	424,784.2	84,200.0				84,200.0	95.0	5.0	„Դի Էմ Էլզ Ստուդիո, ՄԴԸ	84,200.0		424,784.2
„Գնեմ, վաճառեմ,“ ռեժ. Գ. Թադևոսյ ան	23,365.0	14,365.0	9,000.0			9,000.0		61.5	38.5	Էլեգիա կրկնակերպություն Ն ՄԴԸ /ՈՂ/, Հայաստանի ազգային տնտեսություն	9,000.0		14,365.0
Ընդամենը խաղ.	3,360,027.2	2,243,652.2	511,743.0	604,632.0	54,000.0	249,200.0	208,543.0				457,743.0		2,848,284.2

<< Հայաստանի ազգային կինոկենտրոն>> ԴՊՈՎ-ի կողմից 2017-2018թթ.. ընթացքում վարձակալված նկարահանման տեխնիկայի վերաբերյալ

Հ/Հ	Տարեթիվ	Փման ընթացակարգ	Մասնակիցներ	Կնքված պայմանագիր	Գումարը հազ. դրամ	Նպատակը /ֆինդերի նկարահանման համար տրամադրվող տեխնիկա/
1	2016թ.*	Բաց ընթացակարգ	Միակ մասնակ.՝ Ապաթեղ ՍԴԸ	27.05.2016թ.*	11000.0	<<Ռչ թեթև ուշագնացություն>> ֆիլմ
2	2017թ	Բանակց. ընթացակ.	Ապաթեղ ՍԴԸ	27.02.2017թ	798.0	<<Լամա>> դեբյուտային ֆիլմ
3	2017թ	Բանակց. ընթացակ.	Ապաթեղ ՍԴԸ	10.03.2017թ	210.0	Մշակութային կանգառ ծրագիր
4	2017թ	Մեկ անձ	Ապաթեղ ՍԴԸ	19.04.2017թ	490.0	Մշակութային կանգառ ծրագիր
5	2017թ	Մեկ անձ	Ապաթեղ ՍԴԸ	10.05.2017թ	2300.0	<<Ջրմանուշ >> ֆիլմ՝ 2000,0 հազ. դրամ
6	2017թ	Մեկ անձ	Ապաթեղ ՍԴԸ	05.06.2017թ	13425.0	<<Ճահճ. և թանձր թախ. մեջ> ֆիլմ՝ 300,0 հազ. դրամ <<Աղջիկն ու մահը>> ֆիլմ՝ 5095,0 հազ. դրամ <<Տեր ողորմյա>> ֆիլմ՝ 1200,0 հազ. դրամ <<Ջրմանուշ>> ֆիլմ՝ 7130,0 հազ. դրամ <<Բարկաճառ>> ֆիլմ՝ 5500,0 հազ. դրամ <<Հայր ու տղա>> ֆիլմ՝ 2400,0 հազ. դրամ <<Անիմե մարդ>> ֆիլմ՝ 20350,0 հազ. դրամ <<Տատիկիս Վարսերը>> ֆիլմ՝ 1750,0 հազ. դրամ
7	2017թ.	Փանշնան հարցում	Միակ մասնակ.՝ Ապաթեղ ՍԴԸ	11.07.2017թ	30000.0	
8		11.07.17թ.-ի պայմ. + 10%	Ապաթեղ ՍԴԸ	01.09.2017թ	650.0	<<Անիմե մարդ>> ֆիլմ՝ 20350,0 հազ. դրամ
9	2017թ	Մեկ անձ	Կարապետյան ժ. ֆիլմ. անձ	09.07.2017թ	420	<<Կիրակի>> ֆիլմ
10	2017թ	Մեկ անձ	Հիերոգլիֆ ՍԴԸ	14.10.2017թ	770.0	<<Փեն, վաճառեն>> ֆիլմ
11	2017թ	Մեկ անձ	Փարոզ Գրիգորյան Ա/Ձ	28.11.2017թ	1062.5	<<Փեն, վաճառեն>> ֆիլմ /Մոսկվա/
12	2017թ	Մեկ անձ	Մանասյան Տիգրան Ա/Ձ	20.12.2017թ	2250.0	Մշակութային կանգառ ծրագիր
Ընդամենը /2017թ.-/					63,375.5	
այդ թվում՝ Ապաթեղ ՍԴԸ					58,873.0	
13	2018թ.	Մեկ անձ	Փարոզ Գրիգորյան Ա/Ձ	07.03.2018թ	1590.0	Երևանում կայացած Եփիմանժի 150-րդ Նիստ
14	2018թ.	Մեկ անձ	Փարոզ Գրիգորյան Ա/Ձ	15.08.2018թ	80.0	Դրամաշնորհային ծրագիր
Ընդամենը / 2017-2018թթ.-/					65,045.5	

*Ծանոթություն՝ << Ապաթեղ>> ՍԴԸ-ի հետ 2016թ.-ին կնքված պայմանագրերից /58,365 մլն/ 11,0 մլն դրամի ծառայությունները մատուցվել են 2017թ.-ին

**<<Ակաթեղ>> ՍՊԸ-ի հետ կնքված Նկարահանման ֆ լուսավորման տեխնիկայի վարձավալության պայմանագրերի վերաբերյալ
/2012-2018թթ../**

հազ. դրամ												
ՀՀ	Նկարագիր	<<Հայաստանի ազգային կինոկենտրոն>> ՊՈԱԿ-ի և <<Ակաթեղ>> ՍՊԸ-ի միջև կնքված Նկարահանման և լուսավորման տեխնիկայի վարձավալության պայմանագրեր								<<Ակաթեղ>> ՍՊԸ-ի և պրոդյուսերական ընկերութ. միջև կնքված պայմանագրեր		Ընդամենը Ամբողջը
		2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.*	2017թ.	Ընդամենը	2017թ.	2018թ.		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1	Կնքված պայմանագրերի գումարը	54,468	29,905	30,811	72,912	68,490	47,873	304,459	19,205	8,005	331,669	
այդ թվում՝ դրոշ սարքեր դրոշք Ներառված են կնքված պայմանագրերում												
1.1	Թվային տեսախցիկ /Ռեդ Ուան Բոդի/	14,170	12,610	1,690	11,180	6,240	5,720	51,610			51,610	
1.2	Կինոխցիկ /Կրոի Ալեքսա Էքս թի Պլյուս/ հավաքածու/			12,000	36,000	18,400	19,850	86,250	3,000		89,250	
1.3	Գծնեղատուր /FG-վիսոն P88-Ե1 /պլստիկց./	8,000	4,300	3,200	6,400	5,200	8,700	35,800	3,400	700	39,900	

***Ծանոթություն՝** << Ակաթեղ>> ՍՊԸ-ի հետ 2016թ.-ին կնքված պայմանագրերից /58,365 մլն/ 11,0 մլն դրամի ծառայությունները մատուցվել են 2017թ.-ին